

# ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ՕՐԷՆՔԻՆ ԿՈՌԻԱՆԸ

Մեր ազգային բարքերէն շատոնց վտարեալ սովորութիւն մը յանկարծ օրուան թարմ այժմէութեան հրապոյրովը կը վերերեւի: Թիւրքիոյ Հայերը մօտ երեսուն տարի է մոռցած ըլլալ կը թուէին կրօնական բռնաբարութեամբ պատրիարք տապալելու աւանդութիւնը. եւ ահա հինաւորց «չի յիշուի»ն անգամ մը նորէն կը թնկացնէ հոյ սաճարը:

Սահմանադրութիւնը պատրիարքական իշխանութիւնը խիստ հսկողութեան ներքեւ գնելով անոր պատասխանատուութեան ծանրութիւնը թեթեւցուցած էր: Պատրիարքը պարտաւոր էր երեսփոխանական ժողովէն ընտրուած կեդրոնական վարչութեան որոշումներուն կա՛մ համակերպիլ, եւ կա՛մ Ազգային ժողովին դիմել: Ազգային բարձրագոյն իշխանութիւնը ռամկավարական դրութեամբ դատելու եւ դատապարտելու պէտքը Սահմանադրութեան թուականէն ետքը հետզհետէ այլ եւ չէր զգացուեր: Թագութեան Պօղոս պատրիարքին օրովը Սահմանադրութեան դրժադրութիւնը առժամակէս դադրած ըլլալով ժողովուրդը իր պատրիարքը «չի յիշուի»ով հրաժարեցնելու հարկադրուեցաւ: Խորիմեան Հայրիկի պաշտօնավարութեանը պզտիկ խմբակ մը Պէշիկթաշի եկեղեցին «չի յիշուի»ն մըթմըթաց. բայց այդ բզզիւնը ազգային ձայնին մէջ մարեցաւ. ժողովրդական պատրիարքը օրինական միջոցներով քաշուեցաւ իր պաշտօնէն: Ներսէս պատրիարք պաշտօնին զուլը վախճանեցաւ: Յարութիւն պատրիարք երուսաղէմ փոխադրուելով իր անունին շուրջը ազմուկները դադրեցան: Իսկ Ալըզեան Խորէն պատրիարք որչափ աւտեն որ օրէնքը յարգեց ինքն ալ անվտանգ ու անվկանդ մնաց: Բայց երբ 1891էն յետոյ Սահմանադրութիւնը դադրած համարելով այլ եւս երեսփոխանական նոր ընտրութիւններ կատարել չտուաւ, երբ այլ եւս երեսփոխանական ժողովը չգումարեց, երբ կրօնական ժողովին ներգործութիւնը ոչնչացնելու համար թողաւորեց երկու ազգեցիկ եպիսկոպոսներու՝ Իզմիրեանի եւ Ալէաթեանի՝ այդ ժողովէն կառավարական տնօրինութեամբ վտարուելը,

երբ փոխանակ Քաղաքական ժողովի մը՝ միայն Մազուտ Սիմօն պէյ միապետաբար կը տիրէր իր տրամադրութեան ներքեւ ունենալով պատրիարքը, երբ կեդրոնական վարչութեան երկամեայ պաշտօնավարութեան շրջանը լըրանալուն Ազգային ժողով չգումարուեցաւ նոր ընտրութեան համար, երբ մամուլը որ ազգային գործերու քննադատութեան մէջ ազատ ձգուած էր, պրկուեցաւ պատրիարքարանին պահանջումով, ա՛լ անատեն «չի յիշուի»ն վեցհարուածեանին մէջէն որսաց, ու սրբեց տարու պատրիարքն ալ, վարչապետն ալ: Խորէն պատրիարք եւ վարչապետ Մազուտ պէյ օրէնքը սոսնակիս ըրած էին, իրենք ալ օրէնքէն դուրս նկատուեցան: Ապօրինաւորութեան օրինակը իշխանութիւնը ինք կուտար, ժողովուրդն ալ ազատ էր իր շարժումներուն մէջ ինքզինքը օրէնքով կաշկանդուած չհամարիլ:

Հինգ տարի վերջը կ. Պոլսոյ պատրիարքարանը ճիշդ ու ճիշդ 1894ի առօրեանը կը ներկայացնէ. տարրեր մարդիկ, համանման կացութիւն: Օրմանեան պատրիարք երեսփոխանական նոր ընտրութիւններ կատարել չի տար. Ազգային ժողովը երեք տարի է չէ գումարուած, կրօնական ժողովին երկու ազգեցիկ անդամները՝ Յովհաննիսեան Գրիգորիս եւ Մանկունի վահրամ եպիսկոպոսները՝ երկտեղի հրամանով չէզոքացած, ինչ որ Ազգային կեդրոնական վարչութիւն կը կոչուի՝ լսի Տատեան Արթին փաշայի մը անձին մէջ կը կայանայ. կրօնական ու Քաղաքական ժողովներուն երկու տարուան պաշտօնավարութեան շրջանը լրանալէ յետոյ երրորդ տարի մըն ալ բոլորեցաւ եւ դեռ ոչ ոք կը մտաբերէ երեսփոխանական նոր ընտրութիւններ կատարելով Ազգային ժողով գումարել եւ նոր վարչութիւն ընտրել. մամուլը այնպէս շղթայուած է Պոլսի ինչպէս երբեք նմանը չէր տեսնուած: Ուրե՛մ: Հո՛ն ուր իշխանութիւնը օրէնքը կը բռնաբարէ, հո՛ն իշխանութեան դէմ բռնաբարութիւնը կը սկսի, եթէ ժողովուրդը մը իբր ազգ ապրելու արժանիքը ունի:

Ուժգին շարժումը արտասահմանի Հայերէն կը սկսի, ինչպէս Ալըզեան պատրիարքին օրոքն ալ: Այս առթիւ մտքերու առջեւ օրինական հարցում մը կը ներկայանայ. արտասահմանի Հայերը ո՛ր է իրաւաստութիւն ունին կ. Պոլսոյ պատրիարքարանին վրայ. իրենց ներքիլ է ուղղակի միջամտութիւն մը Թիւրքիոյ Հայոց օրինական իշ-

խանութեան գործերուն մէջ: Պատասխանը հաստատա-  
կան է: Զուտ օրինական կուսանին վրայ կը կենանք ա-  
ռանց յուզելու ազգի մը բարոյական համերաշխութեան  
խնդիրը: Այն ամէն եկեղեցիներուն մէջ ուր կ'ըլլայ Պոլսոյ  
պատրիարքին անունը կը յիշատակուի, հոն ժողովուրդը  
իրաւասութիւն մը ունի պատրիարքարանին վրայ: Գահի-  
րէ, Ռուսճուզ, Ուսթըր նոյն են ինչ որ Իզմիր, Ռոտտոթօ,  
Պոլիս: Իսկ արտասահման կայ նաեւ հոծ հայութիւն մը  
որ ուղղակի մայրենի երկրին հետ բարոյական եւ նիւ-  
թական ամէն տեսակ շահերով կապուած է: Անոնք այն  
բիւրաւոր Հայերը որ Հայաստանի ամէն կողմէն Ամբրիկա  
վազած են: Անոնք երկիրն են իրենց հայրերը, մայրերը,  
իրենց տունն ու տեղը, հողն ու արարչ՝ եւ իրենք ամենքն  
ալ հայրենի երդիքին ներքեւ պիտի վերադառնան: Զը-  
տածե՛ն թէ այդ երդիքին ապահովութեանը համար ի՞նչ  
կ'ընէ կ'ընէ Պոլսոյ պատրիարքարանը: Ու երբ կը տեսնեն  
թէ ազգային իշխանութիւնը որուն վրայ այնքան յոյսեր  
գրած են, կը լքանէ զիրենք, երբ կը տեսնեն թէ պատրի-  
արք մը իր պարտականութիւնները ոտնակոխ կ'ընէ, եւ  
իրենք ալ զրկուած են օրինական ո՛ր եւ է միջոցէ ձայնե-  
րին լսեցնելու համար, բնական է որ ուղղակի ժողովուրդ-  
կան միջամտութեան հարկը զգան:

Արտասահմանի Հայոց ձեռնարկները պատրիարք մը  
տապալելու անբաւական են. բայց կրնան այնպիսի հա-  
մեմատութիւններ առնել որ ուշ կամ կանուխ իրենց ազ-  
գեցութիւնը զգալի ընեն: Ժամանակակից պատմութիւնը  
քիչ մը ուսումնասիրելով պատրիարք եւ վարչութիւն պիտի  
կրնան գուշակել արտասահմանի յուզումին հաւանական  
հետեւանքները:

Ազգային ղեկավարութիւնը օրէ օր սաստկանալով պատ-  
րիարքը հետզհետէ անհրաժեշտ կացութեան մը կը մատ-  
նուի: Փրկութեան երկու միջոց կայ. առաջինը՝ հրաժա-  
րական տալով քաշուիլն է, ինչ որ Օրմանեանին էն խե-  
լացի դործը կ'ըլլայ, եւ հետեւանքները ազգին օգտուէտ:  
Երկրորդը՝ օրէնքին տառական գործադրութեանը մէջ պէտք  
է փնտռել: Ազգային ժողովը հարկ է գումարել կարճ ժա-  
մանակամիջոցի մը մէջ: Բայց ո՛չ այն ճակատոր եղած  
Ազգային ժողովը որ ինք տարիէ հետէ վերանորոգուած չէ,  
եւ հիմակ հազիւ թէ օրինական մեծամասնութիւն ունենայ:  
Երեսփոխանական ընտրութիւնները կատարուելով ազգը  
պատեհութիւն պէտք է ունենայ այնքան գտնադէտ պա-  
տահարներէ յետոյ իր ձայնը օրինական միջոցաւ լսեցնել:  
Վերանորոգուած Ազգային ժողովն է որ գումարուելու է,  
իր զլխաւոր գործն ըլլալով կեդրոնական նոր վարչութեան  
մը ընտրութիւնը, եւ նախորդին համարառութիւնը:

Իրաւ է թէ սուլթանը պիտի ղեկավարի Ազգային ժո-  
ղովին գումարուած արտօնել. բայց պատրիարքը նախ եւ  
անաջ թո՛ղ զիմուած ընէ, եւ ստացած պատասխանին վը-  
րայ իր պարտականութիւնը որոշապէս պոռած կը տեսնէ  
իր առջեւ: Սուլթանը 1893ին ալ չուզեց երեսփոխանա-  
նութեան գումարուած թոյլատրել, բայց 1894ին վերջերը  
Ազգային ժողովը հանդիսաւոր նիստ կ'ընէր եւ Իզմիրեան

Մատթէոս եպիսկոպոսն ալ պատրիարք կ'ընտրէր: Սուլ-  
թանը 1895ին վերստին ընդդիմացաւ Ազգային ժողովին  
գումարման, բայց տարի մը ետքը Հայոց երեսփոխանու-  
թիւնը նորէն իր նիստը կ'ընէր: Պատրիարքը կրնայ այս  
թուականները յիշել եւ յիշեցնել ուր որ անկ է:

Քիչ առեւնէն պիտի ներկայանայ պարագայ մը որ  
Ազգային ժողովին գումարուած անխուսափելի հարկ մը  
պիտի ընէ: Կ'ըլլայ օրագիրները հաղորդեցին թէ կի-  
լիկիոյ կաթողիկոսին ընտրութիւնը մօտեքս պիտի կա-  
տարուի. արդ՛ ընտրութեան արդիւնքը պէտք է Ազգային  
ժողովէն վաւերանայ, եւ ապա սուլթանին վաւերացմանը  
ներկայացուի: Պատրիարքը կարո՞ղ է այս պարագային մէջ  
ալ օրէնքը ոտնակոխ ընել:

Ո՛չ պատրիարք, ո՛չ վարչութիւն կրնան սահմանա-  
դրութեան վերաքննութիւնը պատրուակ մը ընել ժողովին  
գումարուած յետաձգելու համար: Առանց ազգային ժողո-  
վին հաւանութեանը Սահմանադրութիւն չի կրնար վերա-  
քննուիլ: Օրինական տրամադրութիւնը բացորոշ է այս  
մասին. ահա Սահմանադրութեան 99րդ յօդուածը:

« Ազգային Սահմանադրութեան սկզբունքը անփոփո-  
խելի են: Բայց երբ փորձառութեամբ՝ ի՞նչ ի՞նչ տրամա-  
դրութեանց փոփոխութիւնը հարկաւոր դատուի, Ընդհա-  
նուր ժողովը՝ Սահմանադրութեան հաստատութեանն հինգ  
տարի ետքը՝ Վերաքննութեան Յանձնաժողով մը կը կազ-  
մէ, կրօնական եւ Բաղադական ժողովներէն երեքական ան-  
դամ, չորս Տեսուչ խորհուրդներէն երկերկու անդամ, եւ  
ասոնցմէ զատ Ընդհանուր ժողովոյ մէջէն կամ զրէն վեց  
հօգի, ընդամէնը քսան անդամ ընտրելով: Այս յանձնա-  
ժողովը կը սահմանէ հարկաւոր դատուած փոփոխութիւն-  
ները, որ Ընդհանուր ժողովը վաւերացնելէն ետքը, Բարձ-  
րագոյն Դրան կը ներկայացուին, եւ կայսերական հրամա-  
նին համեմատ կը գործադրուին: »

Այն Սահմանադրութիւնը որուն հաւատարիմ մնալու  
երկում ըրած է Օրմանեան պատրիարքը ահա ի՞նչպէս ու-  
րոշած է Սահմանադրութիւնը վերաքննելու պայմանները:  
Այն բոլոր աշխատութիւնները զոր զաղանապէս վարչու-  
թիւնը կը կատարէ երեք տարիէ ի վեր անօգուտ են, վասն  
զի գործողութիւնը ապօրէն կերպով կը կատարուի: Վե-  
րաքննութիւնը Ազգային ժողովէն ընտրուած մարմինը  
պիտի կատարէ, եւ Ազգային ժողովին վաւերացումէն յե-  
տոյ Դրան պիտի ներկայացուի քննուած վաւերացուած  
ծրագիրը: Հետեւաբար Օրմանեան պատրիարքը եթէ  
պատուոյ տարրական զգացումը ունի կարող չէ « վերա-  
քննութիւն սահմանադրութեան » բառը բերանը առնել,  
մուլթին մէջ գործուած դաւադրութիւններու համար:

Պատրիարքը այս ամէնուն դէմ կրնայ առարկել որ  
բազմապիւմ ղեկավարութիւններ կան իր առջեւ: Բայց միշտ  
սուլթանին կողմէ յարուցուած ղեկավարութիւններու վրայ  
կը խօսուի, առանց մտաբերելու թէ ազգին կողմէն ալ պա-  
հանջումներ կան: Պայթումի բոսպէն է միայն որ ազգը մըտ-  
քերնին կ'իյնայ:

Օրինական կուսանին վրայ ամուր կանգնելով է որ

պատրիարք մը թէ՛ ազգին, թէ՛ իր ժողովականներուն, թէ՛ կառավարութեան կարող է հեղինակութեամբ խօսիլ: Օրէնքը պատրիարքին ձեռքը աւանդ մըն է, թո՛ղ պաշտեալը սրբութիւնը, և ժողովուրդը զինքը կը յարգէ ու կառավարութիւնը իրմէն կ'ահիւստի: Ինչ որ ալ ըլլային Աշգեհան Խորէն պատրիարքին տկարութիւնները, բայց որքան ատեն որ սահմանադրական պատրիարք մը մնաց իրեն զէմ խիստ բողոքի ձայներ չլսուեցան: Խորիմեան և Երեսն պատրիարքները շատ բան պարտական են Սահմանադրութեան: Օրմանեան պատրիարք կա՛մ պէտք է Սահմանադրութիւնը յարգէ, և ուրիշներուն ալ յարգել տայ, կա՛մ հրաժարի: Ուրիշ ելք չկայ:

**ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ Կ. ՊՈԼԻՍ**

Է

Պ. Մ. Չերազ Միացեալ-ընկերութեանց անօրէն ժողովին ասանապետ ընտրուելէն քիչ ետքը Վանի վարժապետանոցը փակել տուաւ 16 քուէով: Այդ որոշումը տրուած կիրակիէն քանի մը օր ետքը հանգուցեալ Ստեփան ֓ափազեան տխրութեամբ ըսաւ.

— Կիրակի իրիկուն ...ը ձիով կը վազէր, Վսփորի վերջին շողենաւին չէր հասած, ձեռքովը նշան ըրաւ, ձին կեցուց, ու երբ մօտեցայ, ուրախութեամբ գոչեց. « Գոցեցինք, գոցեցինք »: Ի՛նչը, հարցուցի. « Վարժապետանոցը »: Ու ձին քշեց: Յաւած սրտով ետեւէն նայեցայ: Կարող չէի երեւակայել թէ կրնան գանուիլ երիտասարդներ որոնք զարոց մը փակած ըլլալուն համար ուրախանան: Մինչեւ իսկ եթէ ծանր հարկ մը զիրենք պարտաւորած ըլլար այդ քանդուածին, պէ՛տք էր ուրախանային, փոխանակ խորապէս ցաւելու:

Մեր ժամանակակից կեանքին էն խորին տրտմութեան էջերէն մէկը կը յօրինէ Վարժապետանոցին փակման պատմութիւնը: Վանէն արցունքներով գրուած նամակներ այդ մահուան սեւ նկարագրութիւնը բերին մեզի: Մեկնեցան Վասպուրականի զեղերէն հաւաքուած աշակերտները, տարտղնեցան Հայաստանի սրբիշ քաղաքներէ եկածները: Յիբուցան եղաւ ինչ որ տարիներու ընթացքի մէջ այնքան աշխատութեամբ, այնքան զոհողութեամբ մէկիկ մէկիկ հաւաքուած էր:

Պ. Փորթուզալեան սակայն ուզեց շարունակել մեծ գործը որուն նուիրած էր կեանքը. այդ մեծ հաստատութիւնը վերարացուեցաւ « Կեդրոնական Վարժարան » անունով, զոր սակայն անօրէնը երկու տարի ծանր աշխատութեամբ վարելէ յետոյ պարտաւորեցաւ փակել: Մեծ ընկերութեան մը աշակցութիւնը պակասած էր իրեն, ու քաղաքական հանգամանքներն ալ սկսած էին աննպաստ

ըլլալ: Պ. Փորթուզալեան 1883ին Վանէն վերջնապէս մեկնելով Երոպա անցաւ:

Վարժապետանոց-Կեդրոնականը իր կարճատեւ կեանքով իսկ շատ նպաստեց Վանի մտաւորական եւ բարոյական յառաջդիմութեանը: Այդ հաստատութիւնը ազգին տուաւ լրջամիտ, խոհակամ, ազատասեր երիտասարդութիւն մը, որուն մէջ էր Միրտիչ Թէրլէմէզեան: Աւետիսեան ծածկանունով նահատակուած, մեր հանրային կեանքի էն մաքուր, էն զեղեցիկ զէմքերէն մէկը:

Կը փափաքէի Վարժապետանոցին ներքին պատմութիւնը նախկին աշակերտներէն մէկուն կողմէն գրուած տեսնել: Հայ ազգը պիտի իմանար թէ քսան տարի առաջ Հայաստան ու Պոլիս երիտասարդութիւն մը ո՛ր պիտի մտածութիւններէ առաջնորդուած ազգին ապագան պատրաստել կ'ուզէր: Պ. Փորթուզալեան ազատութեան շունչ մը փչեց ամբողջ Վանի վրայ: Առանց երբեք Յեղափոխութիւն բառը արտասանելու, ինչպէս կը հաւատեն իր աշակերտները, պատրաստեց յեղափոխական սերունդ մը որուն ազդեցութիւնը հզօր եղաւ Վասպուրականի մէջ: Ո՛ր եւ է աշխատութիւն չի փճանար: Վարժապետանոց-Կեդրոնականի նախկին աշակերտները ու անոնց հետեւող սերունդը կոչուած են Հայաստանի վիճակին բարոյքմանը նպաստելու, եթէ իրենց ընկերակցական մարմինը հո՞մ արանութեամբ աւելի զօրացնեն:

Միացեալ-ընկերութեանց Կովկաս գտած համակրանքը շատ նուազեցաւ Վարժապետանոցին փակմանը պատճառաւ: Կրթութեամբ Հայաստանը զարգացնելու ամբողջ ծրագիր մը պատրաստուած էր, հիմնաքարը Վարժապետանոցը ըլլալով, ու հինգ տարիէ հետէ աստիճանաբար կը գործադրուէր. հիմակ հիմը տեղէն կը խախտէր, շէնքը ի՛նչ գաղափարի վրայ հաստատուն պիտի մնար: Արժրունին բացատրութիւններ խնդրեց ինէ. ու ես շուարած մնացի: Թէ՛ իրեն գրած անձնական նամակներովս, թէ՛ Մշակի թղթակցութիւններովս յուսադրած էի Կովկասցիները, ինչպէս ես ալ կը հատալայի, թէ Պ. Չերազի ատենապետութիւնը մեծ օգուտներ պիտի ունենար Հայաստանի համար: Ա՛լ հիմա գոհացուցիչ պատասխան մը գտնել անկարելի էր: Յրտութիւնը սկսաւ: Ա՛լ ոչ ոք կը խօսէր այն 80,000 բուբլիին վրայ զօր խրկել խօստացուած էր երեք ընկերութեանց միութենէն յետոյ: Ու կովկասեան նուիրատուութիւնները հեռզհեռէ պակսեցան, մինչեւ որ օր մը ա՛լ բոլորովին դաւրեցան: Պ. Չերազ շուտով հրաժարական տուաւ, և ուրիշներ եկան փրկելու ինչ որ դեռ կը մնար:

Վարժապետանոցին փակումէն եւ Կովկասեան նուիրատուութեանց դադարումէն յետոյ այլ եւս հնարաւոր չէր նախկին լայն ծրագրին գործադրութիւնը. բայց Միացեալ-ընկերութիւնները տակաւին Հայաստանի կրթութեանը համար շատ բան կրնային ընել, և ըրին: Ազգանուէր Հայուհեաց ընկերութիւնը Միացեալին յանձնեց Հայաստանի իր վարժարաններուն խնամակալութիւնը, ծախքերը ինք հայթայթելով:

Թէ՛ Միացեալին եւ թէ՛ ուրիշ ընկերութեանց կազմակերպութիւնը 1885—87ին, Նուրեանի Քաղաքական ժողովին տնօրինութեամբը, հիմնական փոփոխութիւն կը բերցո՛ւր Բոլոր ընկերութեանց համար վարչապետը կազմական միօրինակ կանոնադրութիւն մը պարտաւորիչ ընելով ամենքն ալ ուղղակի պատրիարքարանին իրաւասութեանը ենթարկեց. վերջնական քայքայումին նախապատրաստութիւնները տեսնուեցան. ու 1899ին, Օրմանեանի պատրիարքութեան եւ Տատեան Արթին փաշայի վարչապետութեան օրով այլ եւս գոյութիւն չունին ո՛չ Միացեալը, ո՛չ Ազգանուէր Հայուհեացը, ո՛չ Դպրոցասէր Տիկնանցը, Հայաստանի կրթութեան համար ո՛չ մէկ ընկերութիւն, մինչդեռ բիւրաւոր որբեր ամէն ժամանակէ աւելի մեր խնամակալութեանը կը կարօտին:



Մեր կրթական պատմութեան այս դուռը շատ համառօտաբար ամփոփեցի իր գլխաւոր գծերուն մէջ, պարտաւորուած ըլլալով բազմաթիւ կէտերու վրայէն լուծեամբ անցնելու. Երբ մեր ազգին համար լաւագոյն օրերը գան, ուրիշներ իրենց արամադրութեան տակ ունենալով ընկերութեանց հրատարակած տեղեկագիրները, Կ. Պոլսոյ և Կովկասի թերթերուն հաւաքածուները և ուրիշ կարեւոր նիւթեղէններ, անշուշտ պիտի ձեռնարկեն աւելի ընդարձակօրէն գրել ինչ որ Կ. Պոլսոյ հայ երիտասարդութիւնը կէս դար շարունակ Հայաստանի կրթութեանը համար ըրաւ. Առ այժմ իմ նպատակս էր մոռցողներուն միտքը ձգել, եւ չզիտցողներուն ծանօթացնել, թէ Կ. Պոլսոյ նախորդ սերունդները թէ՛ եւ ճառագիւցին, թէ՛ եւ երգեցին, բայց Մայր—Հայրենիքին համար ալ զրական գործեր ըրին: Եթէ միայն Միացեալ, Ազգանուէր—Հայուհեաց, Դպրոցասէր—Տիկնանց ընկերութիւններուն աշխատութիւնները մտքերնիս բերնեք, պիտի մխիթարուինք զիտնալով որ 1876էն 1899, Հայաստան 60,000 էն աւելի մանչ ու աղջիկ ձրիաբար կարգաւ, գրել, հաշուել, ազգային պատմութիւն, զիտութեանց սկզբունքներ սորվեցան, ինչ որ մեր վրայ տիրապետող կառավարութիւնը իր բոլոր զօրութեամբը անկարող եղաւ իր գեղացիներուն համար ընել:

Կէս դարէ ի վեր Կ. Պոլսոյ հայութեան իտէական նըպատակը եղաւ Հայաստանի վիճակին բարոյական ու նիւթական փոփոխութիւնը. իրարու յաջորդող սերունդները յարատեւող շարունակութեամբ դէպի այդ նպատակը կ'ընթանան: Ու ամէն անգամ որ մեր գոնէ մօտաւոր անցեալը կ'ուսումնասիրենք, նոր ուժ մը կը զգանք մեր մէջ միշտ յառաջանալու: Այդ անցեալը ցոյց կուտայ թէ թէ ինչ որ ալ ըլլան արտաքին երեւոյթները, միշտ զօրաւոր կամքով, անյողզող հաւատքով յորդուց որդի մեր ազատագրութեան դատին կ'աշխատինք: Յարատեւութիւնը մեծ զօրութիւն մըն է. անհատներն ալ ազգերն ալ իրենց յաջողութիւնները մեծապէս յարատեւութեան կը պարտին: Մեր այդ ուժին զիտակցութիւնը ունենանք: Իր

տուժմային առաքինութեանց զիտակցութիւնը ազգի մը համար ապահով պահպանն է վհատութեան ո՛ր եւ է վտանգի վէժ:



Կ. Պոլսոյ կրթական ընկերութիւնները մեծապէս նըպաստեցին Ռուսաստանի եւ Թիւրքիոյ Հայոց միջեւ ներքին մտերմական յարաբերութիւններ ստեղծելու: Ու այդ յարաբերութիւնները հետզհետէ ուրիշ երեւոյթներու ներքեւ շարունակուեցան: Ակնարկ մըն ալ տամ այդ անցեալին, որուն աւելի ընդարձակ ուսումնասիրութիւնը աւելի բարեղէպ ժամանակներու կը վերապահեմ:

Հայ ազգին համար 1877—81ի ժամանակամիջոցը անակնկալ թուական մըն էր: Փթթումի գարունը այլ եւս պիտի գար երկրի մը որ շատ դարերէ ի վեր ձիւնի ներքեւ ծածկուած կը մնար: Ու մարդերը, հանգամանքները կը միանային հայ ազգը մեծ յոյսերով ոգեւորելու, անոր զօրեղ հաւատքը մը ներշնչելու համար: Երկու անուն ամբողջ հայութեան միտքը եւ սիրտը զրուած էին, Խորիմեան Հայրիկ եւ Ներսէս պատրիարք: Եզական բազդաւորութիւն մըն էր հայ ազգին համար իր պատմական ճղնաժամերուն գտնել առաջնորդներ որոնց վրայ անհուն սէր, անսահման վստահութիւն կարենար ունենալ: Հայաստանի, Պոլսոյ, Կովկասի, Եւրոպայի, Հնդկաստանի Հայոց միութեան կեդրոնն էին այդ երկու անունները որ մէկ գաղափար մը կը մարմնացնէին: Միեւնոյն ժամանակ եւրոպական պետութիւնները կ'ուզէին Հայաստանը իրենց հովանաւորութեանը ներքեւ առնել. Հայոց բազմադարեան դրժբազգութիւններու պատմութեանը մէջ անմասն երեւոյթ: Օսմանեան իշխանութիւնը յուզուած էր, եւ գոնէ արտաքուստ, փութաջանութիւն ցոյց կուտար եւրոպական միջամտութեան մը առջեւ կտրելու, կարգ մը բարեկարգութիւններու գործադրութեամբ: Ատոնց նախապատրաստութեանը համար Դրան կողմէ Յանձնաժողովներ՝ պատրիարքարանին հսկողութեանը ներքեւ՝ Հայաստան կը մեկնէին: Ու մինչ այս քաղաքական նոր թուականը կը բացուէր, Պոլսոյ երիտասարդութիւնն ալ ձեռքերը ծալած, «Նայինք ի՞նչ պիտի ըլլայ» ըսելով չէր նստած: Ինչ որ ալ ըլլար պէտք էր սակայն պատրաստուիլ ապագային. կրթական ընկերութիւնները այդ հեռատեսութեան ծնունդն էին:

Մինչեւ այդ թուականը Կովկասեան Հայոց գաղափարները ինչ որ ալ եղած ըլլային Թիւրքիոյ Հայոց վրայ, յայտնի է թէ 1878էն յետոյ Թիւրքիոյ Հայոց վրայ մեծ համարում սկսան ունենալ, եւ իրենց համոզումները զրական փաստերով հաստատեցին: Համեմատաբար կարճ ժամանակամիջոցի մը մէջ Ռուսաստանի Հայոց մեզի տուած նուէրները շատ պերճախօս են: Վանի շուկային այրելուն առթիւ, 1876ին, կարեւոր գումար մը հանգանակուելով վան իրկուեցաւ, եւ աւելցած մնացորդը, 1,000 ռուպլի, ետքէն Արարատեան ընկերութեան յանձնուեցաւ: Կրթական ընկերութեանց՝ մօտաւորապէս 30,000 ռուպլի.

Հայաստանի սովելոց՝ 100,000 և անկի. Ռուբինեան Ամբրոսիոս վարդապետին, Հայաստան երկրագործական վարժարան մը բանալու նպատակա՝ 20,000 բուլլի, Ներսէս պատրիարքին՝ 4,000: Կը թողում ուրիշ մանր մունր նուիրատուութիւնները: Եւ կարելի չէ որոշապէս դիտնալ թէ ո՞րքան առատահոս և մինչեւ երբ պիտի բղխէր այդ աղբիւրը եւ ի՞նչ արգասաբերութիւն պիտի պարգևէր Հայաստանի եթէ զանազան դժբաղդ պարագաներ զայն շուտով ցամբեցուցած չըլլային: Միացեալ-ընկերութեանց նուիրատուութիւնը դադրեցաւ գլխաւորապէս վանի վարձապետանոցին փակուածովը: Իսկ Ռուբինեան Ամբրոսիոս վարդապետին ըրած հանգանակութիւնը հարիւր հազարնեւ-բու կրնար յանգիլ, եւ հրաշալի կերպով նպաստել Հայաստանի երկրագործութեան վերածնունդին, որ պէտք էր գուզընթանար կրթական վերածնունդին, եթէ պատրիարքարանը՝ կամաւելի ճիշդը Ներսէս պատրիարք՝ ծայրայեղ բարեմտութեամբ շարժած չըլլար, զուցէ չնախագուշակելով իր յանձնարարականին զիւթական ազդեցութեան ամբողջ հետեւանքը: Ռուբինեան Ամբրոսիոս վարդապետ 1879ին գարնան Կովկաս գնաց որպէս զի հանգանակութիւն ընէ Հայաստան երկրագործական վարժարան մը բանալու համար: Ինք Ռուսաստան անժանօթ էր, եւ Ներսէս պատրիարքին յանձնարարականովը ներկայացաւ: Բայց պատրիարքը, որ իր մարդը աղէկ ճանչնալու պատճառներ ունէր, պարտաւոր էր նախ Պոլիս լուրջ մարմին մը կազմել եւ Կովկաս հաւաքուելիք դրամին գործածութեանը համար պէտք եղած ապահովութիւնները ունենալէ յետոյ միայն Ռուբինեան վարձապետը Ռուսիոյ Հայոց ներկայացնել: Բայց այսքան բարակը չնայեցան: Օր մըն ալ յանկարծ Մշակի մէջ կարդացինք թէ Ռուբինեան Ամբրոսիոս վարդապետ Ներսէս պատրիարքին յանձնարարականովը Կովկաս հանգանակութեան ելեր է, և Պոլիս գորաւոր ընկերութիւն մը կայ եղեր որ այդ դրամովը Հայաստան երկրագործական վարժարան մը պիտի բանայ: Ու գործը յաջող առաջ կ'երթար: Ռուբինեան Ամբրոսիոս շատ պերճախօս է, ինչպէս մեր Պոլսոյ վարդապետներուն մեծամասնութիւնը: Բնականաբար այդ «պերճախօս» անականը շատ լայն իմաստով աննելու չէ: Մեր Կովկասցի Հայերը շուտով կը յափշտակուին այդ տեսակ քարոզներէն, մինչ մենք ո՛ր և է արտակարգ ազդեցութիւն չենք կրեր, թե-րևս վարժած ըլլալնուս պատճառաւ: Պարզապէս հրաշագործ մըն էր Ռուբինեան վարդապետը. ուսկից որ կ'անցնէր հոն հայ ժողովուրդը կը զիւթէր, կը մոգէր, կը գրաւէր եկեղեցիին բեմէն: Ու ներս կը մտնէր անհատական բնական-բանէն ալ եւ կը հմայէր: Հազարէն մէկը պատմեմ: Թիֆ-լիզ Միլլիանց անունով հարուստ մը կար, որուն ձեռքը ամբափակ գոց կը մնար ո՛ր և է նուիրատուութեան համար. այդ միջոցներուն իր մէկ զաւակն ալ մեռած ըլլալով մարդը բոլորովին խտտասիրտ եղած էր. իր գուռը փակ կը պահէր, մասնաւորապէս եկեղեցականներու առջեւ: Ռուբինեան վարդապետ կը մտաբերէ երթալ մխիթարել այդ վառնացեալ սիրտը, եւ զայն կակղեցնել «Հոգոցն հանգուցե-

լոց» ով մը: Թիֆլիսցիները մեր վարդապետին կը յայտարարեն թէ «զուր ջանք անօգուտ վաստակ» պիտի ըլլայ ատ. ո՛չ թէ բան մը պիտի չիրցնէ Միլլիանցէն, այլ գոնէն իսկ ներս մտնելը անհնարին պիտի ըլլայ: «Է՛, տե-սէք թէ ես ներս կը մտնեմ եւ օգտակար վաստակ կ'ընեմ թէ ոչ, կ'ըսէ, զուք ալ իմ ի՛նչ ըլլալս կը հասկնաք:» Թիֆլիսցիները իրենց համոզումին մէջ անխախտելի կը մնան: Վարդապետը կ'երթայ Միլլիանցի գուռը կը զարնէ. ետեւէն դիտողներ հեռուն կը սպասեն: Այո, ներս կը մտնէ, ու բաւական ալ կ'ուշանայ գուռս ելլելու: Վերջապէս կ'երեւի ճառագայթարձակ դէմքով: Այո՛, փրցուցեր է, եւ 100 բուլլի. անհաւատները կը քննեն, կ'իմանան, կը հաստատեն անհաւատալի իրողութիւնը: Ալ անկէ ետքը օ՛ն յառաջ: Ռուբինեանի յառաջընթաց կը վագէ հրաշագործի համբաւը:

Ռուբինեան վարդապետին հանդանակութեան պաշտօնով Կովկաս գացած ըլլալը իմացած չէի. երբ Մշակէն տեղեկացայ անոր ձեռնարկները, պարտականութիւն համարեցի թղթակցի պաշտօնս խղճամտութեամբ կատարելու համար պէտք եղած տեղեկութիւնները ստանալ Պոլիս: Ամէն կողմ հարցուփորձ ըրի, եւ պտուղեցի որ ո՛չ ընկերութիւն կայ, ո՛չ մարմին կայ, ո՛չ կանոնադրութիւն կայ, ոչինչ: Ամբրոսիոս վարդապետ կը յայտարարէր թէ Բերա Բանկալթի իր տունը որ «Ռուբինեան վարժարան» կը կոչուէր, Երկրագործական վարժարանին կը նուիրէր իր նուէրը. արդ՝ այդ տունը 400 ոսկի գրաւի դրուած էր, եւ հազիւ թէ արժէքը այդ գումարին հաւասարէր. վարդապետին առաջին գործը պիտի ըլլար հանգանակած դրամովը այդ տունը նախ ազատել: Համոզուեցայ թէ Կովկասցի Հայերը շահագործելէ զատ ուրիշ նպատակ չունէր այդ վարդապետը, եւ սոսկացի մտածելով թէ Ռուսիոյ Հայերը օր մը ի՛նչ մեծ պատրանք պիտի կրէին տըխուր ճշմարտութիւնը իմանալով, ու հակահարուածը ամէնուն համար պիտի ըլլար: Քննութիւններուս արդիւնքը հազարեցից Մշակին, եւ անմիջապէս հանգանակութիւնը դադրեցաւ: Այս միջոցին սակայն վարդապետը 20,000 բուլլի հաւաքած էր: Ետքէն այդ եկեղեցականը Բաբերդի առաջնորդ եղաւ. միշտ Երկրագործական վարժարանը պիտի բանար, եւ զեռ պիտի բանայ: Ինծի միշտ անըմբռնելի կը մնայ Ռուբինեանի նման, եկեղեցական ըլլան թէ աշխարհական, կարգ մը յանդուգներու մտքի ծայրայեղ տկարութիւնը: Ասոնք գոնէ կիրք ունենային, եւ իրենց հակաուսկորդները ջախջախելու միջոցը իրենց գործերուն մէջ փնտռէին: Երեւակայեցէք որ Ռուբինեան հաւաքած դրամովը Երկրագործական վարժարանի մը հիմնարկութեան նախաձեռնութիւնը ունենար, մեզի ամենքս պզտիկ ձգելու համար. ի՛նչ փառք իրեն, եւ ի՛նչքան թշնամանք պիտի յարուցուէր ընդդէմ անոնց որ վարդապետին թափը կարեցին: Անցեալը անցեալ է. միայն պէտք է երեւակայել թէ Հայաստանի նիւթական զարգացմանը ի՛նչ ահազին գարկ պիտի տար Կովկաս եթէ Ամբրոսիոս վարդապետ իր յատկութիւնները լուրջ ձեռնարկի մը համար գործածէր:

Անուղղակի կերպով ի նպաստ հայկական խնդրին հանգանակութիւն մը սկսաւ ըլլալ Կովկաս եւ առաջին արդիւնքը 4,000 ռուպլի խրկուեցաւ Ներսէս պատրիարքին: Կ. Պոլսոյ Ազգային ժողովը խնայողութեան համար պատրիարքին ամսականը 50 ոսկիէն 30ի իջեցուց: Հայոց պատրիարք մը, մանաւանդ Ներսէսի պէս մէկը, ինչ կրնար ընել այդքան ոչինչ գումարով մը. ձգենք ուրիշ ծախքերը, պատրիարք մը չի կրնար մերժել իրեն զիմող ազգասնները որոնց մէջ շատ կան այնպիսիներ որոնք իբր խոստովանաճօր մը կը գիտեն պատրիարքին: Այդ ճշդ-ճիւղ խնայողութիւնը, — որուն մինչև իսկ կ'ենթադրեմ թէ կարելի չըլլայ հաւատալ, այնքան արտառոց կը թուի, — շատ բնորոշ գաղափար մը կուտայ Կ. Պոլսոյ մասնաւորապէս ունեւոր դասակարգին զգացումներուն մասին: Հայկական խնդրին մարմնացումը եղող պատրիարքին եւ ոչ իսկ 50 ոսկի ամսական մը, մինչ անկէ առաջ, անկէ ետքը մինչև հիմակ այդ գումարը սիրայօժար տրուած էր, տրուեցաւ եւ կը տրուի: Եղելով Ներսէսի բարկութեամբ գրեցի Մշակին. Կովկասի Հայերը տակնուվրայ եղան, եւ ահա անմիջապէս 4,000 ռուպլի գումար մը պատրիարքին եկաւ, անընդհատ շարունակութեան խոստումով: Սակայն Ներսէս պատրիարք մասամբ քաղաքական նկատումներով, մասամբ անձնական նկատումներով այդ դրամը յատկացուց այնպիսի նպատակներու որ նուիրատուները այլ եւս նոր առաքումներու պէտք չտեսան: Պատրիարքը Երզնկայի վանքի մը վերաշինութեանը յատկացուց ընդունած նուէրին մէկ մասը, մնացածն ալ նմանօրինակ բարեգործական նպատակի մը: Իսկ Ռուսիոյ Հայերը կը կարծէին թէ իրենց խրկած գրամը Ներսէս պատրիարքին ձեռքովը մասամբ հայկական խնդրին պիտի գործածուի, մասամբ պատրիարքին պատրուան որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով սերտ յարաբերութիւն ունին ազգային գործերուն հետ. վանքերու վերաշինութեան յատկացումը չէր: Դժբաղդաբար նուիրատուութեանց առաքումը գաղտնի շննալով Ներսէս պատրիարք պարտաւորուած էր, ինչքան որ կրնամ ենթադրել, ստացած գրամը գործածել այնպիսի եղանակաւ մը որ նուիրատուներուն անուղղակի ազգարարութիւն մը ըլլար այլ եւս չշարունակելու:

Ռուսիոյ Հայերը միեւնոյն ատենները Մշակի միջոցաւ նուիրատուութիւններ սկսան ընել ուղղակի հայկական գաղտնի համար: Եւրոպա եւ Պոլիս Հայոց ծախքովը եւրոպական թերթերու թղթակիցներ ունենալը օղտակար սեպուեցաւ. եւ անոնց ծախքը Կովկասի Հայերը պիտի հոգային, ու բաւական գումար մըն ալ հանգանակուեցաւ: Նաեւ Մշակ 10,000 ռուպլի հաւաքեց եւ վիեննա խրկեց Լ'Օթալե թերթին զոր ար Սալ անունով հրեայ մը հիմնած էր հայկական գատը պաշտպանելու համար: Եւրոպայի մէջ հայկական գատը պաշտպանող թերթեր ունենալու գաղափարը մեծ ընդունելութիւն կը գտնէր Ռուսիոյ Հայոց մէջ, եւ տեսակ տեսակ առաջարկներ հրապարակաւ կը յայտնուէին:

Մենք թիւրքիոյ Հայերս Հայութեան վերաձնուողին

յոյսը կուտայինք Ռուսիոյ Հայոց, ու անոնք իրենց նիւթական ու բարոյական աջակցութիւնը կը նուիրէին մեզի: Միեւնոյն խանդավառ զգացումներով համակուած, ու փոխանակելով մեր գաղափարները, ազգային միտք մը ստեղծելու կը ձգտէինք: Կովկաս իր զրամին հետ մէկտեղ կուտար նաև մեզի կորովի և ուժի մարդերը որոնց էն հեղինակաւոր ներկայացուցիչները Արծրունին եւ Բաֆֆին էին: Մշակը Պոլիս եւ Հայաստան տարածուեցաւ. հայ մտքի պատմութեանը համարնոր թուական մը կը բանար: Բաֆֆիի հեղինակութիւնները թիւրքիոյ Հայոց ամէն խաւերուն մէջ թափանցեցին: Եւրոպական մատենագրութեամբ սնած սերունդը ինչպէս նաեւ միայն հայերէն գիտցողները հաւասարապէս կը կարդային, կ'ուսումնասիրէին Բաֆֆին և կը ներշնչուէին անկէ: Բաֆֆի եւ Արծրունի թիւրքիոյ Հայոց մտքերուն սիրուած ու յարգուած առաջնորդները կը հանդիսանային: Մեր գրականութիւնը Կովկասի կուտար Երենցը (Երշմանեան) որուն վկայերը զիրար յորժ կարգացուելով հին հայկական կեանքին իմաստասիրութիւնը ու բանաստեղծութիւնը կը վերակենդանացնէին: Բաֆֆի եւ Երենցը անցեալն ու ապագան կը ներդաշնակէին իրարու: Աղամեան եւ Տիկին Հրաչեայ Կ. Պոլսոյ Հայոց գեղարուեստական զարգացումը կը փոխանցէին Կովկասի Հայոց. Պարսեան փորձի մէջ «Հոսոս» ստորագրութեամբ նամակներովը սրամիտ հեղինակութեան նորոյթով կը հրապարակէր ամենքը: Թիւրքիոյ Հայոց հանրային կեանքին ամէն երեւոյթները՝ քաղաքական, զրակական, բարոյական օրը օրին թիֆլիսի մամուլին մէջ կը պարզուէին եւ ու Արգամ-Սօսիւն, «Մեղու Հայաստան» լրջախոհ և ուղղամիտ թղթակիցը: Իսկ Կովկասէն Կ. Պոլսոյ մամուլին խրկուած թղթակցութիւնները թէեւ այնքան շատ չէին, բայց բազմաթիւ անգամ յիշուած մամանակներուն թերթերը աւելի ընդարձակ տեղեկութիւններ կը հրատարակէին: Այդ միջոցներուն թիֆլիս բժիշկ Պ. Բազարատ Նաւասարդեան հիմնեց «Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութիւնը» որ Կովկասի Հայոց հանրային կեանքին զարգացմանը հզօրապէս պիտի նպաստէր: Ու ճիշդ այն ատենը ուր մեր Միացեալ-ընկերութիւնը կը կործանի կառավարական պահանջումով, անդին ալ Միացեալին մամանակակից Բարեգործականը ամենամանր հարուած մը կ'առնէ ուսկառավարութեանէն: «Բերմունք ժամանակի» պիտի ըսուի:

Այս յիշատակներու շարքին ամբողջութեանը մէջ Ռուսիոյ եւ թիւրքիոյ Հայոց հին սերտ յարաբերութեանց մասին քիչ շատ գաղափար մը կարծեմ կրցի տալ, առանց ընդարձակօրէն խօսելու: Քսան տարուան աշխատութիւններէ ու զոհողութիւններէ յետոյ կը տեսնենք մեր հայրենիքը աւելի քան երբեք զժբազգ, ու մեր ազգային խորհուրդներուն իրագործումը յետաձգուած. ինչ որ կ'ապացուցանէ թէ փափաքն ու աշխատութիւնը յաջողութեան մը միակ պայմանները չեն: Անցեալին ուսումնասիրութիւնը մեզի կը սորվցնէ որ թէ Ռուսիոյ եւ թէ թիւրքիոյ Հայոց խանդավառութեանը հաւասար չեղաւ եւ մտքի լըջ-չախոհութիւնն ալ, գոնէ տասնեակ տարիէ ի վեր: Ու հիմայ պէտք է աշխատինք որ մեզի յաջորդող սերունդը օր մը նորէն այս դասաստանը չընէ մեզի համար:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ  
Վ Ե Ր Զ

## ԱՐԻԻՆԻՆ ՔԵՐԹՈՒԱԾԸ

## Կ Ա Մ Ա Ր Ա Կ Ա Պ

Աշերոզմի՞ գիշեր :

Հետոներեն մահագանգալի ցնորաբեր ձայն :

Սպանդանոցի խորոշնի վախ մը դռներուն ետեւ ,

Ու գետնափորներուն մէջ մոխրի վրայ աղօթող այրի կիներ ծերադիր :

Դորսը քիարանի պատրական շոշոխեւ մը կը յաշերժանայ .

Ու քարանձաւներեն ստոշերէն վար կը քաշալին՝

Գի՛նով ոճրագործի այսահար արտիսներուն նման . . . :

Օ՛ , բոլոր պատռահաններուն յոյները աշրուած աչքերուն տանջանքն ունին . . .

Ու կարծես բոլոր աստղերն ալ խաշարին մէջ կը խղղոշին :

Օ՛ , պետք է գրաւ աւ մեկնաւոր հոգիներուն որ կը վախնան՝

Չորի մը խորը տեսնուած ծաղիկներուն կերպարանքերով ,

Ու մանաւանդ անոնց որոնք այրոշը ըլլալ կ'ուզեն ,

Հիշանդ անբաւարձներուն այլարադճոշիւներով քրքուան :

Բոլոր ամոշիները հողէն հանուած մարմիններուն սարսափն ունին ,

Ու բոլոր նորածիները՞ հեռաւոր մայրեր կ'երագեն . . . :

Օ՛ , այդ բոլոր որք հոգիները որ իրարուն մէջ կը նային

Քնաշրջիկներուն խօշակաւ ու հայցող նայուածքներով ,

Անկարող իրարուն մէջ ապաստան մը գտնելուն . . .

Այնքան նման այն մահաւերձներուն

Որ մեկմեկուն նայուածքին տակ , իրենց մահը կը տեսնեն . . . :

Աշերոզմի ցնորաբեր գիշեր :

Ու տարօրինակ երագ մը գիշացիները յաձախեց :

Ուխտաւորներուն երկայն վերարկուներով ,

Գետին ափերէն , տաժանօրէն մեռելական ,

Ուտերնին բոպիկ ,

Ու իրենց ձեռքերը արծարի խեղամաններ բսնած ,

Շատ բարեպաշտօրէն ,

Իեպի « Չարխափան » ձամբայ կ'եղին :

Յաշիտենական վախէն զգայախար ,

Ամրող գիշը , երագին մէջէն , խաշակքելով , կը փախչի ,<sup>7</sup>

Կոյր ոչխարներուն ձերմակ հօտերուն նման

Որ փորրկի գիշեր մը աձապարանքով ջոշիկ մը պիտի անցնին . . . :

Աշերոզմի ու արիւնի գիշեր :

Օ՛ , նայեցէք

Եփրատին զանանդական եզերքներէն

Բորենիի աշոշներով մարդակերներուն շտապը՝

Երագին վրայէն , ձորերն ի վեր ,

Անհոշօրէն , դեպի գիշ . . . :

Օ այն ընդհարուները ոսկորի ու սոշերուն ,

Որ իրենց գիշատողի շարժումներէն

Խոշօրէն կ'արձագանգուին

Լեռներուն տակ անարկուն:

Ու իրենց նայուածքները մանաւանդ,  
 Ու ակնակերևուն խշրտոտքը սղոցոտող մարմարի,  
 Ու մրրկունը զանգոռածեղ խոռժանիկ,  
 Որ տեղափոխոտող անտառներուն ցնորքն ունի...  
 Ու բոլորը մեկ Արիւնը կ'երգեն...  
 Ու բառերը իրենց յովազի բերաններէն մրին,  
 Յանկարծօրէն կտրոռած վերքերուն նման,  
 Քարերուն վրան, ծանրօրէն կ'իջնան...:

Աշերունի ու արիւնի գիշեր:

Օ՛, բոլորդ մեկտեղ անմիջապէս աղօթքի կեցեք,  
 Ո՛վ դատապարտուածներուն ցաւագին եղբայրներ:  
 Ինձի այնպէս կոզգայ որ անբողջ գիշեր սարսափահար արթնցաւ...  
 Ու հիմա բոլոր մարմինները իրարուն կը փարթոնին,  
 Բոլոր նայուածքները իրարուն կը պաղատին...  
 Ու բոլոր բազուկները խեղաչեղօրէն շարապը կ'երկննան...  
 Ու ամենը մեկ մահագոռածօրէն «Աստուած, Աստուած, Աստուած»  
 կ'աղաղակեն...:

Աշերունի անդառնալի գիշեր:

Ազոռներուն հանդիսաւոր Խեղդոտքիւն մը գիշերին վրայ...  
 Ու արժիւններուն ձերման նշրոռակներ անոնց հետ:  
 Բոլոր բաղերը ածխահանքերուն երեւոյթն ունին,  
 Ու օդին մէջ արիւնի ու մոխիրի նախաձիւրձը կը հեռայ...  
 Դիակներ, դիակներ, ու մարմիններէ բաժնոռած գրոշխներ,  
 Դեռերուն ամենի ու անձայն նայուածքներով,  
 Անեղօրէն, սեռ պատերուն երկայնքն ի վեր կ'աշտարակոշին...:  
 Օ՛, ըսէ՛ք, հոգեվարքներուն հեծկոտանքը աւ բոլորին մէջէն...  
 Որ կարապներուն սպիտակ կոտորածի մը այնչափ կը նմանի,  
 Ու կիսամեռներուն մտածոռը որ իրար կը ձանջնան...  
 Ու անոնք որ իրար փրկել պիտի ուզէին  
 Կոյսերուն նման որ ճիւղի օր մը վանքերուն մէջ կը գիսատոնին...:  
 Կարծես խաւարներուն յաշիտեանականոտքեանը մէջէրէն,  
 Հեռաւոր դանիւններ արիւնի սահանքները բացեր են  
 Առններուն բոլոր տժգոյն հոգիներուն վրայ,  
 Ու այգիներուն բոլոր պայծառ աւազաններուն մէջ,  
 Ուր հիմա անգաւթի մը հաւար,  
 Արիւնին ոգեկոչող հաւարունիկ տակ,  
 Տիրական Մահը, Մտածոռները ու բոլոր ջրացատրոռած Սերերը  
 Նայուածք նայուածքի պիտի գան...:

Գերեզմանեղներուն վրայ, արշաղոյսին մէջէն,  
 Հիւսաւորք ուրոռակները երգեցին.  
 «Խաղաղոտքիւն անոնց որ գերեզման չունեցան...  
 «Ու Խաղաղոտքիւն անոնց ալ որ հոգեվարքէ կը տանջուին...»

Բարից

ԱՏՈՄ ՄԻՐՁԱ

ՕՐՈՒՆՆ ԱՆՆԱԲԵ

Հունան, 12 սեպտեմբեր 99

Սեռ տօներ: — Խորհրդանշան դագաղ մը: — Գառաւ սանկի մը շոշորը: — Ցաւերուն մեծը: — Երեքը:

Ամէն տարի սրոշեալ օր մը Հրեաները Պոլիս մեզի հանդիսատես կ'ընէին սուգի տարեգարծի մը դօր մի օրացոյցը տիրութեան վստիւթեամբ կ'արձանագրէ. « Հրեքից. Մամ վասն գերութեան եւ տերման Երուսաղէմի, « սր է Գարապայրամ: » Այդ Սե Ծօնին օրը անանկ մանրամասն ու փարթամ սեղանատրք գլխին լսմով մը ծածկած, մէկ գիշերն մինչեւ միւսը անօթի, ծարաւ, լալազին կը սաղմոսերգէին, այնպիսի խոր զգածեալ արքամութեամբ որ կրնար ենթադրել տալ թէ Երուսաղէմի աւերմանն ու գերութեանը դեռ առաջին տարեգարծն էր: Աւաշարհիս ամէն անկիւնը բոլոր Հրեաները միեւնոյն օրը միեւնոյն տիրութեամբ համակեալ, կը վերանորոգեն ազգային կոկիծը: Գարեբէ ի վեր է այս սրբութեան յիշատակը ամէն տարի կը վերակենդանանայ, եւ իրեն հետ կը վերակենդանացնէ հրեութեան ոգին: Ո՛չ հայրենի հող ունի Հրեան, ո՛չ մայրենի լեզու, եւ սակայն Հրեաները ցեղ մը ու ազգ մըն են: Իրենց Հայրենիքը՝ Եհովան է որուն մէջ ամենքը ի մի կը ձուլուին. իրենց լեզուն՝ Սե Ծօնն է որ ամենքը ի մի կը շղթայէ:

Կարօտ չենք եւ մենք ալ Ազգային Ծօնի մը որ դո՛ւն տարւան մէջ մէկ օր մը ազգային վշակն արտաբանութեամբ ամենքս միացնէ, որ դո՛ւն տարւան մէջ մէկ օր մը ամէնուս սրտին խորը բանաստեղծին երկը թրթռացնէ.

Մեկտեղ լացիքք մեկը ի հընդում,  
Եկիք դարձեալ յսր սեբաժան  
Խառնեմք զարտօսք եւ զխեղառմ,  
Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան:

Ու մենք միգի այդ օրը հարցնենք. « Ինչո՞ւ բանաստեղծութիւն այս երգը, եւ ո՛չ իրականութիւն: » Մեր պատմութեան մէջ Սե տօնի յիշատակ մը հաստատելու օրերը չեն պակսիր, բայց կարծեմ թէ մեր ժամանակակից կեանքին մէկ օրը իր մէջ կը խտացնէ Հայրութեան ամէն գաղտնութիւնները, հինն ալ, նորն ալ. այն օրը, ուր մեր ազգային հաւատքը էն ծանր հարուածը ստացաւ. այն օրը որուն համար ընդհանուր մարդկութեան պատմութիւնը պիտի ըսէ. « Անիկա տարւան օրերուն հետ չմիաւորուի, ու ամիսներուն մէջ չհամրուի: » Վասն զի այդ օրը, օգոստոս 14 26, Երուսալեմ եւ Ամերիկա իսլամ սուլթանին ռաքերուն տակ դռարպակ կտրեցին զազափալը, քաղաքակրթութիւնը, բարոյականութիւնը, բրիտան...

նէութիւնը, սոսոցելով այդ մատաղը վեց հազար հայուարիւնն:

Ամէն քաղքէ աւելի Պոլիս պէտք է խորին թախմատութեամբ սերունդէ սերունդ անմասաց պահէ այդ օրուան յիշատակը: Բայց Պոլիս, գո՛նէ՛ Հայերը, կը բո՛նեն թեթեւ սուգ մը ամէն անգամ որ Սե թուականը կը բուսիր: Անցած շաբթու աչքէ անցուցի օգոստոս 14էն 21ի սուլթանական թերթերը, ու յիշեցի ժողովրդին սկեպտիկ մեղաւարտութեամբ լեցուն այն խօսքը թէ « Ի՛նչ կ'ըլլայ՝ մեռնողին կ'ըլլայ: » Բան մը չէ փոխուած: Ինչպէս արեւը, լուսինը, աստղերը ամէն աղէտի ու ցուրի անտարբեր, իրենց ընթացքը կը շարունակեն, ապահովութիւնն իրենց թեթեւ օրէնքներուն կոյր հնազանդութեան մէջ միայն փրկատեղիով, այսպէս ալ Պոլիս Հայն ու Հրեան, Բրիտանիան ու Իսլամը իրենց ապրելու երաշխաւորութիւնը կը փնտռեն ա՛յլ բնական օրէնքի կարգ անցած խրատականութիւններու մէջ: Բան մը չէ փոխուած, Պոլիսը այն է ինչ որ էր 94 օգոստոսին: Նորէ՛ն մեր Մայր-Տաճարին զանգակները մեծագոյն կը հրաւիրեն հայ ժողովուրդը « Թ՛ւրքաւոր փառաց » երգելով դահանալ Աստուծմէ տարի մը եւս սուլթան Համիալը հայ ազգին պարգեւած ըլլալուն համար: Նորէ՛ն հայ ժամուրը իր ձայնը խառնելով երօպացի, յայն, հըրեայ, թիբը մամուլին նուազահանդէսին կը պանծացնէ սուլթան Համիալի բաները տարւան իմաստութիւնը: Նորէ՛ն մեր պատրիարքը եւ մեր ժողովականները վաղնիվազը Երլաքը կ'երթան, Բրիտանիա ուրիշներկայացուցիչներուն, Մեծ Պետութեանց պատգամաւորներուն խառնելով մէջ մալորուելով, ամենքը մէկտեղ « յոսս կայսերական դահոյց » սուլթան Համիալին գնելու բրիտանականութեան ու քաղաքակրթութեան երախտագիտական մեծարանքները: Նորէ՛ն վստիւթն ու Մարմարան լուսափաղփ պայծառութեան մէջ կը լողան, ի փառս եւ ի պատիւ « երիցս երանեալ » տարեգարծին: Նորէ՛ն Պետօն կը շահի նաւարալին որ օգոստոս 15 27ին Պոլսոյ ամէն այլազան ցեղերը իշխանաց կղզին կ'եղբայրակցէ, ու հրճուալիւր ժամանցով մը կը փակէ օգոստոս 14 26ի երրորդ տարեգարծը եւ կ'սղջունէ չորրորդին բացումը:

\* \* \*

Դիպուածը որ շատ անգամ բնազդի մը իմաստութեամբ կ'ուղղէ մեր կեանքը, ու ամէն բան կը բերէ, կը գնէ ճիշդ իր տեղը, Դիպուածը օգոստոս 15 27ի օրը յատկացուց Ալէքսանդրի Գրիգորիս եպիսկոպոսին մահուանը որ երկար առեւնէ ի վեր կը վախցուէր: Այդ մահը է. Պոլսոյ Մեծ-Կոտորածին չորրորդ տարւան առաջին օրը պատահելով, տեսիլքի մը պէս ցնցեց կ. Պոլսոյ Հայերը ու ամէնուն յիշատակին մէջ դեռ երկնուան պատմութիւնը վերակենդանացուց, եւ ամէն Հայոց իրենց վիճակին ծանրութիւնը յիշեցուց: Ալէքսանդրի եպիսկոպոսը 1894ի ազգային յաղթանակէն ինքն ալ իրեն արժանաւոր բաժինը ստացաւ՝ կիլիկիոյ կաթողիկոսութիւնը, ու

96ի աղաները յափշտակեցին այդ ազգովին տրուած իրաւունքը: Պալտոյ ամէն թաղերէն օգոստոս 16/28ին հայ ժողովուրդը երբ գունդագունդ իսկիւտար Ս. Խաչ եկեղեցին կը դիմէր, եպիսկոպոսի մը դազազը տեսնելու հետաքրքրութենէն մղուած չէս պարզապէս: Խորհրդանշանի մը երկրպագութեան կ'երթար:

— Հայաստան մա'րդ մը տեսայ, կ'ըսէր դիշեր մը մեզի Երեւնց Օրթագեղ ուղեւորութենէն վերադառնալուն: Չայնի կըրթա շեշար ենթադրել կուտար թէ մաքէն զրպարտեալ մը կը պաշտպանէր:

— Ո՛վ, տղթոր, հարցուցի:

— Ալէաթճեան'նր, պատասխանեց զայրազին:

Եւ երբ սկսաւ պատմել այդ եկեղեցականին հոգածութիւնը Տարօնցիներուն համար, ան ատեն հասկցայ իր մտովի ցասմանը պատճառը: Հին ամբաստանութիւններ հրապարակազիր վիպասանին ալ յիշողութեանը մէկ խորշիկը մոլորած մնացեր էին. Մուշ, առաջնորդին աշխատութեանցը ի տես, Երեւնց բարկութեամբ լեցուեր էր ընդդէմ անոր հակառակորդներուն. ու հիմակ մեզի հետ խօսած ատեն ինքն իր յիշումներուն կը բարկանար, առանց անդադառնալու թերեւս:

Եւ ինչպէս ատ գիշերը Երեւնցի պատմութիւններուն միջոցին, նոյն եւ այն պահուն երբ Ալէաթճեան եպիսկոպոսին մահուան լուրը առի, մտքիս մէջ կամաց կամաց արթնցաւ հին դատաստանի մը յիշատակը: Եղաւ ատեն մը որ Երզնկայի առաջնորդ Ալէաթճեան Գրիգորիս վարդապետին անունը քրդական հարստահարութեանց ջատագով պաշտպանի հոմանիչ համարուեցաւ: Մասին Ալէաթճեանին ստորագրութեամբը Շահ Հիւսէինի նպատաւոր նամակ մը հրատարակած էր. Փռնչ անոր մէջ Մասիսին դէմ երկնառաջ զէնք մը կարծած էր գտնել: Մոլեզին զայրոյթով մը՝ այնքան աւելի բարկածայթ որքան աւելի կեղծ, Փռնչի խմբագիր Ալաճաճեան Համբարձում էֆէնտին, ինքն իր ինքնատուր իշխանութեամբը, Մասիսի խմբագիր Իւթիւճեան կարապետ էֆէնտին Աստուծու բանաւոր արարածներուն զասակարգէն արտաքսելով տարաւ նետեց միւսներուն՝ անբաններուն՝ շարքը, «վատ կենդանի» հետտրական այլաբանութեամբ: Իւթիւճեան թրքական դատարանին զիմեց, գուցէ այն համոզումով թէ քիւրտ պէյի մը իբր նպատաւոր նախատուող թերթ մը կրնար դատական ամուր կռուանի մը վրայ կանգնած ըլլալ: Փռնչի փաստաբանը ոսկերիչ մըն էր, Թաղէոս Պէկեան, որ քաջութիւն չունեցաւ ի զիմաց Ալաճաճեանին ընդունելու թէ «կենդանի» տիտղոսը փայփայիչ ածական մը չէր: Փռնչին փաստաբանը ջանաց հաստատել թէ այդ թերթը Իւթիւճեան էֆէնտին կենդանի որակելով, պարզապէս անոր շնչող, ապրող էակ մը ըլլալը ծանուցած էր, ուրիշ ոչինչ, զի «կենդանի» բացատրութիւնը հայ լեզուին մէջ կեանք ունեցող կը նշանակէ: Ու ահա Հին կտակարանէն մինչեւ մեր օրերու գրքերը, Նոյի Տապանէն մինչեւ Ս. Ղազարու վանքը վկայութեան կանչուեցան «կենդանի» բառին ճշգրիտ նշանակութիւնը վճռելու հա-

մար. ինչ որ անհնարին եղաւ, ու դատն ալ մնաց կիսատ:

Փռնչի յաղթանակին համար զատարանին առջեւ կարդացուեցան Շահ Հիւսէինի գործերը քննադատող նամակներ որոնք «մինչեւ իսկ դատաւորներուն աչքերը արցունքով լեցուցին» կը դրէր ամբաստանիչ թերթը: Ոչ ոք կ'ոնդրադառնար թէ ինչո՞ւ թիւրք կառավարութիւնը կը թողատրէր այդպիսի նամակներու հրապարակաւ ընթերցումը, եւ անոնց պարունակութեան հրատարակութիւնը: Քաղաքիցը տարիներ ետքը ուրիշներ կը պարզէին մեզի խորին ցաւով: «Ա՛խ, Շահ Հիւսէինին հետ միանալով շատ բաներ կարելի էր ընել, կ'ըսէին. Ալէաթճեանին քաղաքականութիւնը ան ատեն շատ օգտակար էր մեզի, բայց թող չտուին որ շարունակէ:» — «Թող չտուին որ շարունակէ» Տէրսիմէն մինչեւ Խոզան, ու անկէ մինչեւ Վասպուրական այդ թող չտալուն մէջ է մեր երկրին վրայ օսմանեան տիրապետութեան յարատեւութիւնը ապահովող կենսական պայմաններէն մէկը: Հայը իր դիւրագրգիռ շիղերուն ազգեցութեանը ներքեւ գործելով այդ ուժը միշտ աւելի եւ աւելի կ'ամրապնդէ: Այդ Մասիս-Փռնչ զատաստանը իր մէջ կ'ամփոփէր օրինակն այն կարճամտութեան որով Հայաստանի բնիկ ցեղերը իրար ալ կը զոհէն, իրենք զիրենք ալ կը զոհեն իրենց վրայ տիրող օտարին դաւադրութեանցը: Հայ վարդապետ մը, քիւրտ պէյ մը, երկուքն ալ անդին հայրենի հողին վրայ, երկուքն ալ իրենց ցեղերու հեղինակաւոր պետեր, եւ քաջ տեղեակ անոնց իրարու հետ ապրելու փոխադարձ պայմաններուն, ահա ասդին օտար հողի մը վրայ, Պոլիս, թիւրք զատարաններու առջեւ իրենց անունները կը քաշկոտուին, շնորհիւ պոլսեցի գործիչներու, Հայաստանի վրայ ամենաթիւթեւ գաղափար մը իսկ չունեցող Հայերու որոնք իրարու հետ կռուի կը բռնուին իբր քրդասէր եւ քրդատեաց. ու ասոնց ետեւէն թիւրքը, որ ատանց զգացնելու կը վարէ Պոլսեցիները:

Ետքէն Ալէաթճեան ուրիշ դատ ալ վարեց. այս անգամ ինք Պոլիս անձամբ ներկայացաւ դատարանին, չափուելու համար Մուշի կառավարչին հետ: Յաղթանակը հայ եպիսկոպոսը տարաւ, ինչ որ սակայն իր ապագայ պաշտօնավարութեանը մեծ խոչընդոտողը: Տրամաբանութեամբ մը, որ բուրովին ալ անտրամաբանական չէր, Դուռը մտածեց թէ հայ եպիսկոպոս մը որ իսլամ դատարանի մը առջեւ իսլամի մը կը յաղթէ, անիկա վախցուելիք մարդ պէտք է ըլլայ: Ու Ալէաթճեանը Պոլիս վար զըրուեցաւ, մինչեւ որ օր մը Յարութիւն պատրիարք Դրան յայտարարեց թէ «Ես իմ եպիսկոպոսներու համար կառավարութեան առջեւ երաշխաւոր եմ. եթէ իմ երաշխաւորութիւնս չի բռնուիր, ես ալ պատրիարքութիւն չեմ կրնար ընել:» Ու Ալէաթճեան նորէն Մուշ գնաց: Ո՛րչափ հեռու ենք այդ օրերէն, եւ դեռ Յարութիւն պատրիարքին ալ չէինք հաւնած: Մուշէն Ալէաթճեան անցաւ Վան, ու անկէ նորէն նաւաբեկեցաւ Պոլիս, եւ ապաստանեցաւ իսկիւտար Ս. Խաչ եկեղեցիին նաւահանգիստը:

Իսկիւտարի ժողովուրդը մասնաւորապէս կը սիրէր

այդ եպիսկոպոսը որ օր մը « զինուոր Աստուծու և ջրհան-  
կիր ժողովրդին » կոչուեցաւ : Իսկիւտարի մեծ հրգեհին էր .  
Ս . Խաչ եկեղեցին՝ կրակէ պաշարուած՝ այրուելու վտան-  
գին ենթակայ էր . եւ ահա բոցերուն մէջէն յանկարծ ե-  
րեցաւ Ալեքսանտրի վիթխարի կերպարանքը . եկեղեցա-  
կանը ջրհանկիրի մը փոխուած էր . վեղարը նետած, թե-  
ւերը սօթտած, անձամբ կը վարէր ջրհանը : Ս . Խաչ ժա-  
մուն ազատութեանը մէջ Ալեքսանտրի եպիսկոպոս մեծ  
մասնակցութիւն ունեցաւ : Այն գործերէն՝ մէկն էր աս որ  
ժողովրդի մը մտքին մէջ անշնչելի կը տպաւորեն իրեն ա-  
ռաջնորդողի մը գէմբը : Ժողովուրդը որ շատ դժուարու-  
թիւն կը կրէ բարոյական կորույթի մը մեծութիւնը բմբոնե-  
լու համար, միշտ դիւրաւ կը յափշտակուի նիւթական  
բաջութեան մը տեսարանէն :

Ալեքսանտրի եպիսկոպոս որքան հոգեւոր պետ մը,  
այնքան ալ — եւ թերեւ քիչ մըն ալ աւելի — մարմնաւոր  
պետ մը ըլլալու նախասահմանեալ էր . հուսկու, վիթխա-  
րի, կորույթի մարդ մը որ ամբոխին վրայ հզօրապէս կը  
ներդործէ : Ու հեգնական հակադրութեամբ մը, միշտ դիւ-  
րուածին գործը — այս քաջամարմին եկեղեցականը կը  
ճանչցուէր փափկութեան ու տկարութեան գաղափարը  
պատկերացնող « Թռչնիկ » մակդիրովը : Ատ անունը կը  
մնար Ալեքսանտրին 1863էն . մինչ հազիւ 23 տարեկան  
էր, հրատարակել սկսաւ Թռչնիկ Պեգաւեան անունով  
հանդէս մը : Ու հետագրքական էր որ ընդհանրապէս  
կիներ, եւ ընթերցումի շատ հետամուտ չեղողները սովո-  
րաբար կը գործածէին « Թռչնիկ եպիսկոպոսը եկաւ,  
Թռչնիկ եպիսկոպոսը գնաց » բացատրութիւնը : Մակդի-  
րը միշտ իր մէջ պատկերալից պարզ գաղափար մը կը  
պարունակէ, ու շուտով կը տպաւորուի պարզական ուղեղ-  
ներու մէջ :

Ճակատագրական անուն մը գուցէ : Այդ կորույթի, ու-  
ժեղ մարդը խեղճուկ թռչնիկի մը պէս մէկէն ի մէկ զար-  
նուած ինկաւ : Բժիշկները ուղեղային հիւժում՝ ճանչցան  
անոր հիւանդութիւնը : Կը հատամ թէ կաթողիկոսու-  
թեանը ջնջումը խոր վերք մը բացած ըլլայ սրտին վրայ,  
ու անոր ցաւը շիտակ ուղեղին զարկած : Բարոյական  
ո՛ր եւ է տաղնապ աւելի վտանգաւոր չէ սրտի մը որքան  
վիշտը զոր հանրային մարդը կը զգայ երբ՝ իր ազգին նը-  
շանաւոր ծառայութիւններ մատուցանելու կարողութեամ-  
բը օժտուած՝ մէկէն ի մէկ երկուքն ալ, իր խելքն ալ, իր  
կորովն ալ պրկուած, շղթայուած, անշարժութեան դատա-  
պարտուած կը տեսնէ : Կիլիկիոյ բարոյական զարգացմա-  
նը նոր թուական մը ողջունելու հաւատքովը սգեւորուած,  
Ալեքսանտրի եպիսկոպոս կը պատրաստուէր սուրալ, թռ-  
չիլ Կիլիկիա : Այն օրերն էին ուր ամէն հայ կը հաւատար  
թէ ա՛լ վերջապէս հասած էր բանաստեղծին երգած օրը,

Երբոր բացուին դռներն յոշուոյ,  
Եւ մեր երկրէն փախ տայ ճմեռ,  
Չքնաղ երկիրս մերս Արմենիոյ,  
Երբ փայլի իր քաղցրիկ օդեր :

Ու Կիլիկիոյ կաթողիկոսը Իսկիւտարի բարձունքէն  
չկրցաւ ըսել,

Երբամ նկչեյ յիւ Կիլիկիա :

Ննջեց հո՛ն, Իսկիւտար, աչքերը հեռուն յառած,  
Աւետեաց երկրին կարօտովը :



Երեք էին հոն Իսկիւտար, Հայաստանի ճամբուն  
վրայ . երեքն ալ հաւատքով լեցուած կը յառէին իրենց  
աչքերը ազգին Ապագային վրայ զոր պատրաստելու  
համար հզօրապէս աշխատած էին, կ'աշխատէին ու պիտի  
աշխատէին : Գուղկունճուզի ծովեզերքը Լուսաւորչի նուիր-  
ուած ժամու մը մէջ որ գրեթէ մատուտ մըն է, Հայրիկ՝  
Լուսաւորչի ժառանգորդն ըլլալու նախասահմանեալ, կ'ու-  
րախանար, կը ցաւէր, կը յուսար, կը տքնէր : Վերը՝  
բարձունքը, Ս . Կարապետի եկեղեցին՝ Իզմիրեան, որ օր  
մը իբր պատրիարք ժողովրդին զլուխն անցած պիտի կա-  
րապետէր անոր : Քիչ մը անդին, Ս . Խաչ, Ալեքսանտրի  
որ շատ ծանր խաչ մը կրեց, ու խաչին տակը հողին ա-  
ւանդեց :

Եւ կը փորձուիս հարցնել ինքնիրենդ՝ Արդեօք էն  
տարաբաղդը վերջնապէս գացո՞ղն է : Պատասխանը ապա-  
զան պիտի տայ : Իցէ թէ ինչպէս մեր մեծ դիւցազներգու-  
թեան մէջ Հայկազանց հրեշտակը պատմական նախա-  
հայրերնիս սփոփելու եւ զօրացնելու համար, յետ արիւ-  
նազանդ տեսարաններու անոր աչքին առջեւ կը պարզէ  
հայ ժողովրդին նախասահմանուած գեղածիծաղ ապագա-  
յի մը հորիզոնը, իցէ թէ այդ հրեշտակը անգամ մըն ալ  
Էջմիրածին ու Երուսաղէմ՝ երեսնայ, եւ Հայրիկին ու Իզ-  
միրեանին ըսէ . Ապրեցէք, դուք աչքերնիդ բաց չի պիտի  
մեռնիք :

ՀՐԱԶԴԱՆ

ԵՓՐԱՏԻ ՀՈՎԻՏԸ

(« Սրեքդէղըր » շարաբարբերին)

Թույլագէն մեծ գոհունակութեամբ կը տեղեկանանք թէ  
իրաւախոհութիւն մը առաջ եկեր է գերման եւ անգլիացի  
գրամատէրներուն միջեւ, որոնք իրարու հակառակորդ ծը-  
րագիրներ ունէին Փոքր-Ասիան եւ Եփրատի հովիտը զար-  
գացնելու՝ մինչեւ Պարսից ծոցը երկարաձգուող երկաթու-  
ղիով մը : Կ'երեւայ թէ Անգլիացիները ալ պիտի չլիմագ-

րեն գերման սենտրալին ծրագրին, բայց միւս կողմէ Գերմանացիներն ալ անդիւսցի գրաւատէրներուն բաժին մը պիտի վերապահեն ձեռնարկին մէջ, — ինչպէս արդէն նմանօրինակ կարգադրութիւն մը ըրած են ֆրանսացի զըրաւատէրներուն հետ: Ուրիշ խօսքով, գերման ընկերութիւն մը պիտի շինէ երկաթուղին որ աշխարհագրական եւ անտեսական այնքան նպաստաւոր պայմաններու մէջ կը գտնուի եւ որ իբր 65 տարիէ ի վեր խօսքի նիւթ կը կազմէր — կ'ըսուի թէ Անգլիոյ Ուիլիլմ Գ թագաւորը այդ գաղափարին ջերմ ջատագովն էր, եւ նոյն իսկ կը յայտարարէր թէ առաջին անգամ ինք մէջտեղ գրած էր զայն, — բայց թէ Անգլիա եւ թէ Ֆրանսա պիտի մասնակցին գործին: Առանց վերապահութեան կ'ըսենք թէ չափազանց ուրախ ենք իմանալով որ Գերմանիա երկաթուղին պիտի շինէ, եւ թէ անդիւսական ամէն հակառակութիւն վերցած է: Մենք Փոքր-Ասիան կամ Եփրատի հովիտը գրաւելու կամ միւս միւսակ գործացնելու միտք չունինք: Հետեւաբար, պէտք չէ որ Գերմանիոյ խոչընդոտ կանգնիք այդ կողմերը, քանի որ անիկա շատ մէկին կերպով հասկցուցած է թէ Փոքր-Ասիոյ մասին շատ լուրջ եւ շատ որոշ բաղձանքներ ունի: Մենք ուրիշին համար (Ռուսիոյ) աշխատելու պէտք չունինք, հետեւաբար պատճառ մը չկայ որ Գերմանիոյ սաքին առջեւ քարեր գնինք: Փոխանակ նախանձառութեամբ եւ անվստահութեամբ վարուելու, պէտք է կարելի եղածին չափ մէկիկ քաջութիւն եւ թաղուիք որ Գերմանիա ազատօրէն գործէ: Եթէ ուրիշ կերպ վարուելու ըլլանք, իրաւունք պիտի ունենան մեզի ըսելու թէ ընդարձակ երկրի մը բարեկեցութիւնը աւելցնելու եւ Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ հազարակիցութիւնը արդիւնելու մեծ ծրագրի մը հակառակօրոյ կը հանդիսանանք կոր պարզապէս անոր համար որ կրնայ մեր նիւթական շահերուն վնասել: Ատիկա զգուշի բաղաբախանութիւն մըն է, եւ զգուշի ըլլալէն ալ աւելի՝ երբեք յաջողած չէ: Մուկի ջրանցքը շինուեցաւ հակառակ յորա Բալթիկոյ ռեժիմ ընդդիմադրութեանը, եւ ջրանցքին տուած արդիւնքը աւելորդ է ըսել որ Անգլիոյ վնասաբեր եղած չէ: Չրանցքը աճեցուց ու զիւրացուց մեր վաճառականութիւնը, եւ բացի եթէ յայտարարենք որ Հնդկաստան եւ բրիտանական կայսրութեան միւս մասերը բո՛ւ մըն են մեզի, Երկրագոյնը գրաւուած մեզի աննպաստ չեղաւ: Հետեւաբար, Եփրատի Հովտին երկաթուղին շինութիւնն ալ կրնայ նոյնքան նպաստաւոր հետեւանքներ ունենալ մեզի համար: Ամէն պարագայի մէջ, շատ լաւ պիտի ըլլայ եթէ Գերմանիոյ հասկցնենք թէ մենք չենք ուզեր արդեւ ըլլալ իր ծաւալման արդարացի պատեհութիւններուն, եւ թէ սխալ է թէ մենք չենք կրնար հանդուրժել որ մենք զատ ուրիշ պետութիւն մը օգուտ բաղէ աշխարհի լքեալ բայց հարուստ երկրներէն:

Բայց, թէպէտ ուրախ ենք որ Գերմանիա ազէկ առիթ մը ձեռք պիտի անցընէ եւ յօժարակամ կը տեսնենք իր «ազդեցութեան եւ շահու շրջանակին» տարածումը աշխարհիս ամէնէն հարուստ եւ ամէնէն թանկագին մա-

տին վրայ, միւս կողմէ չենք կարող ծածկել սա իրողութիւնը թէ Գերմանիոյ յաջողութիւնները Փոքր-Ասիոյ եւ հին Ասորեստանի մէջ կրնան ամենամանր հետեւանքներ ունենալ թէ Գերմանիոյ եւ թէ Եւրոպայի համար: Այդպիսի վտանգ մը մեզի արդիւնելու չէ Գերմանիոյ ազատ ապարկ թողլէ, բայց պէտք է զիտնալ թէ այդ վտանգը գոյութիւն ունի: Դեռ արեւ. օրինակի համար, հաւատալ թէ Ռուսիա հանդարտօրէն պիտի թողու որ «հիւանդ մարդուն» ժառանգութեան ամէնէն ազուր կտորները Գերմանիոյ բաժինը ըլլան: Ռուսիա պիտի հաւանի՞ որ հաբաւային Փոքր-Ասիան եւ Եփրատի մեծ գաշտը — որ ջրանցքներու շնորհիւ զիւրու կրնայ այնքան բերրի դառնալ որքան Եեղոսի տեղան — ընդմիշտ իր ձեռքէն ելլեն: Անշուշտ կրնայ ըլլալ որ Սիւ ծովուն եզերքներովը եւ մինչեւ Եփրատ տարածուող գաւառներովը շատանայ, բայց կը խոստովանինք որ շատ պիտի դարձանանք եթէ շատանայ: Փոքր-Ասիոյ վրայ գերմանական հսկողութեան մը ինչպէս կրնայ հաւանիլ այն Ռուսիան որ ընդարձակ գործունէութեան մը սկսած է Սուրիոյ մէջ: Եթէ Ռուսիա Սիւ ծովուն եզերքը եւ Ս. Երկիրը իրար միացնելու խորհուրդը չունի, գծուար է ըմբռնել թէ ինչպէս ահազին գումարներ կը ծախսէ եւ այնքան կը ճշի իր ազդեցութիւնը տարածելու Դամասկոսի եւ Լիբանանի շրջակայքը: Եթէ գերմանական հսկի մեծ դօսի մը օր մը Սիւ ծովի եւ Լիբանանի միջեւ պիտի երկարի, Ռուսիա ինչ շահ ունի դպրոցներ հիմնելու ուր ամէն օր ձարին առնենք կ'ողջունուի եւ կը փառաբանուի: Հետեւաբար, — բացի միայն եթէ Ռուսիոյ նպատակը երեւցածէն տարբեր ըլլայ — կը խորհինք թէ Գերմանիոյ ձեռնարկը Փոքր-Ասիոյ եւ Եփրատի հովտին մէջէն երկաթուղի մը շինելու, սպասուվապէս Ռուսիոյ եւ Գերմանիոյ միջեւ յառաջ պիտի բերէ հակառակութիւն մը, զոր մինչեւ հիմալ բոլոր խոհական Գերմանացիները կը գատապարտեն: Մէկ խօսքով, թէպէտ Անգլիոյ գործը չէ Գերմանիոյ հետ կոսի բռնութիւ՛ ատոր առաջըր առնելու համար, կը տեսնենք թէ համար Գերմանիոյ մեծ վտանգ կը ներկայացնեն իր ծրագրները եւ բաղձանքները Փոքր-Ասիոյ մասին: Ինչպէս ասկից առաջ մէկ քանի անգամ ըսինք, զինքը Ռուսիոյ հետ գծուելու կրնան առաջնօրոյց:

Բայց Փոքր-Ասիոյ վրայ գերմանական հսկողութեան յառաջ բերելիք եւրոպական նախանձառութիւնները Ռուսիայով պիտի չըմենան: Մտնալու չենք թէ Աւստրիական կայսրութիւնը, ու մանաւանդ Հունգարիա, շատ պատմութեամբ պիտի տեսնեն գերմանական ազդեցութեան յառնուած Արեւելքի մէջ: Վերջին հարիւր տարուան միջոցին, Աւստրիա ընդարձակ հազարակիցութիւն մը հաստատած է Արեւելքի նաւահանգիստներուն հետ: Դեռ շատ ատեն չէ որ Փոքր-Ասիոյ եւ Սուրիոյ նաւահանգիստներուն առեւտրական շարժման մեծագոյն մասը Աւստրիոյ ձեռքն էր, եւ Աւստրիացիներն ու Հունգարացիները միշտ իրենց միտքին մէջ ունին բաժին մը ձեռք ձգել «հիւանդ մարդուն» ասիական կալուածէն: Այսպէս, Գերմանիոյ

եոնարկը Փոքր-Ասիոյ մէջ՝ զինքը Աւստրիոյ պիտի չմիացնէ ընդդէմ Ռուսիոյ, հապա Ռուսիոյ եւ Աւստրիոյ շահակցութիւն մը պիտի ստեղծէ ընդդէմ Գերմանիոյ: — Ինտալիա, նուազագոյն աստիճանով մը, իր շահերը վտանգուած պիտի տեսնէ, եւ, հետեւաբար, գերմանական կորհուրդներուն յաջողութիւնը Փոքր-Ասիոյ մէջ՝ կրնայ զիրար երբեակ Նիզակակցութեան քայքայման նշանը ըլլալ: Ֆրանսա, մէկի թողլով ուրիշ ամէն նկատառութիւն, հաճութեամբ պիտի չտեսնէ Լիբանանը ու Սուրիան իր մեծ թշնամիին շուքին տակ: Մէկ խօսքով, Վիլհելմ կայսրը չի կրնար զուտը առնել երթալ Փոքր-Ասիոյ մէջ՝ առանց տհաճելի ընդհարման մը մեծ վտանգներուն: Բայց նոյն իսկ ենթադրելով որ այս խոչընդոտները երեւակայական ըլլան, կամ թէ կարելի ըլլայ օձիքը անոնցմէ ազատել, Գերմանիոյ ուրիշ վտանգներ կը սպասեն Փոքր-Ասիոյ մէջ: Փոքր-Ասիոյ եւ նոյն իսկ Եփրատի բնակիչներուն մեծ մասը խաղաղ զեզացիներ չեն, հապա մօլեռանգ իտալներ, որոնք բնաւ հաւանական չէ որ առանց կռուելու հաւանին գերման հսկողութեան: Տարակոյս չկայ թէ որչափ ատեն որ արդի սուլթանը ապրի, Գերմանացիները առեւտրական եւ երկաթուղային ազդեցութիւն մը միայն պիտի ունենան Փոքր-Ասիոյ եւ Եփրատի հովտին մէջ: Բայց երբ արդի սուլթանը մեռնի, շատ հաւանական է — եւ նոյն իսկ սաւոյդ — որ Թիւրքիոյ ամբողջ ասիական ստացուածքները ապստամբութեամբ եւ անիշխանութեամբ տակնուվրայ ըլլան: Այդ պարագային մէջ, Գերմանիոյ երկաթուղային մեծ պատասխանատուութիւնը զինքը պիտի բռնապատէ գործելու: Միջերկրականէն մինչեւ Պարսից ծոց գերմանական երկաթուղին պահպանելու համար զօրքի ինչորոշքը գրեթէ անպիմազրկելի պիտի ըլլայ: Բայց գինուորական այս կարգի գործողութիւն մը տասնապիսով մը կամ քսան նաւազով կատարուելիք բան չէ: Հետեւաբար, զիրին է տեսնել թէ Գերմանիա ինչպէս կրնայ զինուորական մեծ արշաւանքի մը մզով իր ասիական երկաթուղիին պատճառաւ: Բայց եթէ այդպիսի հանգամանքներու մէջ նոյն իսկ չափաւոր պարտութիւն մը կրէ, ո՞վ պիտի երաշխաւորէ զինքը Ֆրանսայի մէջ վրէժնորդութեան ազդակիր վերաբարձութիւն: Գերմանիոյ ձախողութեամբ Ֆրանսայի փնտռած ասիքը պիտի ըլլայ:

Բայց, թէպէտ այսքան վտանգ ու գտաւորութիւն կը տեսնենք, չենք ենթադրեր թէ ատոնք Գերմանիոյ վրայ պիտի ազդեն: Անգործովեան կայսրութիւն մը ձեռք բերելու խօյ ցանկութիւն մը սենի ան, եւ վտանգի հաւանականութիւնները զինքը պիտի չկասեցնեն: Ու երկրի մը համար որ վտանգը սիրայօժար աչք առած է, ընդունելու է թէ Փոքր-Ասիոյ եւ հին Ասորեստանի վրայ հսկողութիւնը ամէնէն հրապուրիչ հեռանկարը կը կազմէ: Փոքր-Ասիա հանրային հարստութեամբ լեցուն է, եւ գետերուն միջեւ գտնուող հողերը՝ Եւրոպայի կէսին բաւելու չափ ցորեն ու բուսպակ կրնան արտադրել, մինչդեռ ժողովուրդը կրնայ երկու տերունդն երսուն — քառասուն միլիոնի հասնիլ: Գերման ազ-

դեցութեան ներքեւ, եւ Գերմանիոյ ձեռքով զարբանալով Փոքր-Ասիան եւ Եփրատի հովիտը կրնան երազական պետութեան մը ամէնէն արժեքաւոր կայսրութիւններէն մին ըլլալ: Այդ կայսրութիւնը Երիտաստի երկրագործական հարստութիւնը պիտի ունենայ, եւ միտադնեղով լեցուն լինենք: Միանգամայն մեծ նաւահանգիստներ պիտի ունենայ Միջերկրականի վրայ, եւ իր Պարսից Ծոցի սեփական նաւահանգստին մէջ՝ Հնդկաստանի եւ ծայրագոյն Արեւելքի վրայ նայլո պատուհան մը: Զարմանալու չէ եթէ Գերմանիա կը ցանկայ այն պետութիւնը ըլլալ որուն պիտի ինչայ վերջ ի վերջոյ այս պարզելու: Ժամանակը միայն պիտի ցոյց տայ թէ զէպի իր կորստաւոր կը գիմէ ասով, թէ չէ կ'օգտուի կոր առիթէն զոր բազմը իրեն բերած է՝ հզօր կայսրութիւն մը հիմնելու համար, — քսաներորդ պարու կայսրութիւնը:

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԸ

Լոնտոնի թերթերը սեպտեմբեր 14ին Կ. Պոլսէն հեռուեալ հնազգիքը հրատարակեցին:

« Հայոց պատրիարքը պաշտօնը Յիշատակազիր մը մատուց որով կարեւոր պահանջումներ կ'ընէ: Պատրիարքը կը սնուէ որ սուլթանը զուժար մը շնորհէ վերաշինելու համար այն եկեղեցիները եւ դպրոցները որոնք հայկական կառոյցներուն ատենը քանդուցանու: Կը պահանջէ որ Կ. Պոլիս նոր որբանոց մըն ալ բացուի: Կը խնդրէ որ դաւանները ճամբորդող եւ առեւտարու Գոլիս եկող Հայոց համար անցադրի գեւարութիւնները վերցուին: Յիշատակաւորը միանգամայն կ'ուզէ որ ընդհանուր մտաջուրը ասորածուի նաեւ 1896 էն յետոյ բանտարկուած Հայերուն, ու ոստիկանութեան նախարարին արգելաւի կամայական ձեռքադրութիւններով Հայերը բռնաարկելու: Պատրիարքը կ'ուզեցնէ որ եթէ սուլթանը մերժէ այս գիշտութիւններն ընել, ինքն ու իր խորհրդականները զգալով որ իրենց վարկը պիտի բեկանի ազգին աչքին, իրենց հրաժարականը պիտի տան, չուզելով հետեւանքներուն պատասխանատուութիւնը ստանձնել: »

Յրմանեան պատրիարքին պաշտօնավարութեան թուականէն ի վեր այսպիսի հեռագիր մը առաջին անգամ ըլլալով եթէ կարգաշար ըլլայինք, պիտի պարտաւորուէինք անոր կարեւորութիւնը ճանչնալու: Բայց ա՛յ ո՛չ սք կրնայ հաշուել թէ այս քանիերորդ անգամ է որ Հայոց պատրիարքը ի լուր աշխարհի կը հրատարակէ թէ ինքն ու իրեն խորհրդական ժողովները պիտի հրաժարին, եթէ կայսերական պաշտոն ներկայացուած առաջարկները մերժուական պատասխան ստանան: Ու պատրիարքին այս յայտարարութիւնը բաւական չհամարուելով վարչապետ Տատեան Աթիւն փաշան ալ պարբերաբար այս օրինակ

տարածայնութիւններ հրապարակ կը նետէ: Ու ամիսները, տարիները կ'անցնին եւ ո՛չ պատրիարքին ո՛ր է մէկ առաջարկին կարեւորութիւն կ'ընծայուի սուլթանէն, ո՛չ ալ պատրիարքին կամ Արթին փաշային հրաժարականը սուլթանին գրասեղանին վրայ կը դրուի: Դեռ տակաւին երկու ամիս է որ պատրիարք ու վարչապետ մեծագործը շտապէն սուլթանի մոտ ճիշդ ու ճիշդ այս հեռագրին բառերով ուրիշ հեռագրիչներ արձակեցին աշխարհի ամէն կողմը: Ու օր մըն ալ լսեցինք որ պատրիարքը պալատ հրաւիրուելով իր պահանջումներուն շուտափոյթ իրականացմանը համար գրական խոտուածներ ստացած է: Եւ լսեցինք ուղղակի պատրիարքարան գալով Օրմանեան Կրօնական եւ Քաղաքական ժողովներուն հազարեց ինչ որ իրեն խոստացուած էր, ու այսպէս մէջտեղէն վերցուեցաւ սուլթանին ներկայացուելիք խնդրագրի մը խնդիրը: Պատրիարքը եկեղեցիին բեմէն ալ ժողովրդին աւետեց սուլթանին «չորհները»: Այդ օրէն ի վեր երկու ամիս անցաւ ու պատրիարքը կը պարտաւորուի կրկին անգամ խնդրագիր տալ եւ հրաժարականի սպառնալիք ընել: Ո՛չ միայն պատրիարքին պաշտօնին արժանաւորութիւնը, այլ նոյն իսկ Օրմանեան պատրիարքին իր անձնական արժանապատուութեան զգացումը պէտք էր պարտաւորէին զինքը այլ եւս նոր խնդրագրի ներու չլիմել, եւ վերաւորուած այն խաբերայութիւններէն որոնք սովորական են Եւրոպայի պարզապէս երկու տողով հրաժարականը տար, եւ առանց Պոլիս մնալու անմիջապէս Արմաշ քաշուէր: Բայց ինչպէս որ պատրիարքը և Տատեան շատ աղէկ դիտեն թէ Եւրոպա ըստ մը պիտի չընէ, նմանապէս սուլթանն ալ շատ աղէկ գիտէ թէ պատրիարքը տեղէն շարժելու բնաւ տրամադրութիւն չունի: Երկուքին միջեւ լինի դաշնակցութիւն մը կայ հայ ազգը խաբելու համար:

Երբ պատրիարքին դէմ յուզումը կը սաստկանայ արտասահման եւ ազգեցութիւնը զգալի կ'ըլլայ Պոլիս, պատրիարքը անմիջապէս լուր կը տարածէ թէ պալատ խնդրագիր տուած է եւ իր առաջարկները մերժուած պարագային պիտի հրաժարի: Կարելի է այդպիսի խնդրագիր մը տուած է, կարելի է տուած չէ, բայց ո՛չ տալը կարեւորութիւն ունի մեզի համար ո՛չ ալ չի տալը: Այսպիսի լուրերով պատրիարքը ժամանակ կը շահի: Ժողովուրդը կը սկսի ըսել՝ Քիչ մը համբերենք նայինք ի՛նչ պիտի ըլլայ. եւ այսպէս «քիչ մը համբերենք»ով տարիները կը բոլորին:

Ուշագրաւ է պատրիարքական խնդրագրին մէջ այն առարկութիւնը թէ իր առաջարկները մերժուած պարագային իրեն հետ պիտի հրաժարին նաեւ իր խորհրդականները՝ այսինքն Կրօնական եւ Քաղաքական ժողովները: Այս ազգարարութիւնը ենթադրել կուտայ որ երբ պատրիարքին ո՛ր է կ'զհացում մը տրուի, Տատեան փաշային վարչութիւնը պիտի շարունակէ պաշտօնավարել, Բայց ի՛նչպէս: Այդ պաշտօնավարութեան օրինական շքանքը արդէն տարի մըն է լրացած է, տարի մըն է որ սահմանադրութիւնը ոտնակոխ եղած է, տարի մըն է որ

Օրմանեան պատրիարք երգմազանց եկեղեցական մըն է Ուայն միջոցին երբ պատրիարքը կարգ մը պահանջումներ կ'ընէ, միեւնոյն ատեն անուղղակի կերպով կը խոստանայ ազգային իրաւունքները իբր փոխարինութիւն զօհել:

Ո՛չ, այս անգամ ալ նշանակեցի մը չափ կարեւորութիւն չեն կրնար ունենալ այս օրինակ զեկուցումները: Մինչեւ որ շոշափելի արդիւնք մը չտեսնենք, չենք կրնար թեթեւ վարկ մը իսկ շնորհել պատրիարքական յայտարարութեանց:

«ԽԱՉԱԳՈՂՆԵՐԸ»

Դարե՛ժի անգլիական հիւպատոսը, Ատրպատականի ԳՑԻ տնտեսական ընդհանուր կացութեան մասին զրկած տեղեկագրին մէջ, որ այս օրերս լոյս տեսաւ, պատշաճ դատեր է նաեւ մէկ քանի տող նուիրել Սալմաստի Նեստորականներուն մէջ գործող օտար միսիոնարութեանց:

Այդ Սալմաստի Նեստորականները մեզի համար ընդհանրապէս ժողովրդական պատկերալից անուն մը ունին, զոր Բաֆֆի գործած է իրենց: Մեր ծանօթ Խաչագողներն են անոնք: Անշուշտ արդարութիւն չէ ամբողջ հասարակութիւն մը գտնել իր աւելի կամ նուազ բազմաթիւ անդամներու գործելու եղանակին վրայէն: Բայց հաւաքական դատաստանները երբ արդար եղած են, եւ մակդիրները երբ ճշգրիտ ճշմարտութիւնը ներկայացուցած:

Չմոռնանք սակայն որ իրենց հայրենիքէն դուրս հեռաւոր արշաւանքներու ելած Նեստորականները բա՛ն մը ըրած չունին իրաւունք տալու համար իրենց վրայէն անհելու Բաֆֆիի յորջորջումը որ խարանի մը պէս փակած կը մնայ իրենց ճակատին: Ընդհակառակը:

Չխօսինք հայկական կոտորածներէն յետոյ իբր թիւրք վայրագութեան զոհերը ներկայացնող Նեստորականներուն վրայ, որոնք Եւրոպա ու Ամերիկա իրենց տարեկան պատոյաններուն մէջ շահագործութեան դիւրին ու պողպատեղ ճիւղ սը գտան ատով: Հիմակ որ եւրոպացի կամ ամերիկացի նուիրատուները, ձանձրացած կամ մոռացկոտ, իրենց դժները փութաշանութեամբ կը փակեն թիւրք բարբարոսութեան վաւերական կամ կեղծ զոհերուն առջև անխտիր, հիմակ որ «Չարդերէն մազապուր ազատած» ի երբեմնի բարգաւաճ արհեստը ա՛լ իր ծախքը չի հաներ ու զէնը կը գերակշռէ շահը, հիմակ Նեստորականները նորէն դարձած են իրենց առջի ճարտարագործութեանը, նորէն դիմելով մարդկային անյեղլի տխմարութեան, որ, ա՛ն, ո՛չ կը ձանձրանայ եւ ո՛չ կը մոռնայ:

Բաֆֆի — որ, աներկբայ, մեծադոյն հեղինակութիւնն է այդ այնքան շահեկան ժողովրդին ցեղագրութեանը մասին — մեզի սորվեցուցած է թէ Նեստորականին համար շահագործուելիք էն սղջ ու անխախտ բանը կրօնքն է, ու այս գործին մէջ Սալմասցիին ցոյց տուած ճարտարու-

Թիւնը զինքը հոգեբանական ամէնէն նուրբ կարողութիւնն էր ու օժտուած հրաշալի էակ մը ցոյց կուտայ: Սալմաստիցին նոր առաքելի մը պէս կը ճամբորդէ աշխարհէ աշխարհ, կրօնական պատկերներու եւ մասունքներու տուրակով մը զոր ոսկիով կը լեցնէ ամէն երկրի միամիտներուն կրօնական եռանդը: Ռուս մուժիքն է զլիսաւորապէս իր թիրախը, բայց աշխարհի մէջ չկայ անկիւն մը ուր Սալմաստիցի ոտքը չգնէ իր հաւատարմարժ տուրակով: Սպանիացի մը վերջերս կը պատմէր ինձի թէ անոնցմէ մէկուն շահնդիպած է կրօնատայի մօտ գիւղ մը, ուր զեղջուկ քահանայի մը ծախելու վրայ էր Յիսուսի հեծած աւանակին աջ ոտքին սուրբը, կամ Խաչելութեան դամբարանը, կամ զեղարդին մէկ կտորը, կամ Յովհաննէս Մկրտչի ակոյ մը, ըստ բազմի: Ո՛վ կրնայ հաշուել թէ մինչեւ հիմա քանի՞ թօնօ դամ ծախած են այս ճարտար վաճառականները, ամենքն ալ վաւերական, ամենքն ալ Յիսուսի արիւնով ժանգոտած:

Իրենց հայրենակիցները, անդին հայրենի հողին վերայ, նուազ արկածալից ու աւելի հանդիսա միջոց մը դատած ըլլալ կը թուին երկրաւոր բարեքները երկնային գործերուն հետ հաշտեցնելու:

Կրօնական շորս տարբեր միսիոնարութիւններ կան որոնք նեստորական 40,000 կամ 45,000 քրիստոնեաներուն հոգեկան պապակը (?) զսհացնելու հոգը ստանձնած են:

Ամէնէն հինը՝ Ամերիկեան Երիցական հաստատութիւնն է, որուն ռահիբրանքը այդ կողմերը հասած են իբր 60 տարի առաջ: Կեղրոնատեղիներն Ուրմի է, ուր խումբը ընդհանրապէս կը բաղկանայ հինգ վեց երէցէ՛ իրենց ընտանիքով, բժիշկէ մը եւ մէկ քանի վարժուհիէ: Իրենց աշխատութեան պտուղը եղած է տեղական երիցական հասարակութեան մը կազմութիւնը, որ ժողովարաններ ու դպրոցներ ունի Ուրմի, Սալմաստի դաշտին մէջ, եւ Խոյ: Գաւրէթի մէջ ալ դպրոցներ ունին՝ ամերիկեան քաղաքացիներու հսկողութեան ներքեւ: Երկու բժիշկ այդ հաստատութեանց ինչպէս նաեւ հասարակութեան մարմնական առողջութեան հոգ կը տանին, բայց ատենցմէ մին, կին մը, գրեթէ ամբողջ իր ժամանակը կը նուիրէ կանանց պատիկ հիւանդանոցի մը, որ վերջերս հաստատուած է:

Երիցականներէն յետոյ՝ կարեւորութեան կարգով կուգայ Ֆրանսացի Լազարիսցիներու լատին միսիոնարութիւնը, որ 50 տարիէ ի վեր հաստատուած է այդ կողմերը եւ մինչեւ հիմա բաւական հոգի փրկած է — կրօնական բուն ճշմարտութիւնները փնտռելու տենչանքով թրթռացող նեստորական հոգիներէն: Լատին միսիոնարութեան գլուխն են եպիսկոպոս մը եւ ֆրանսացի ու քաղզէացի մէկ քանի քահանաներ: Սէն-Վէնսան-տը-Բօլի մէկ քանի քոյրեր ալ միսիոնարութեան մաս կը կազմեն: Լազարիսցիները ճիւղ մը ունին Սալմաստի դաշտին մէջ, որ կաթոլիկութեան ամբողջն է Նեստորականներուն մէջ, բայց այդ ճիւղը կը զսնուի քաղզէացի եպիսկոպոսի մը ձեռքին տակ,

որ Մուսուլ նստող Բաբելոնի պատրիարքէն կախում ունի: Այս երկու միսիոնարութիւնները, հարկ է ըսել, չբաւելով Նեստորականներուն հոգեկան պէտքերուն որոնք աննիւթական վայելումներու տենչովը կը ճենճերին, երրորդ միսիոնարութեան մըն ալ տեղ տուած են իրենց մէջ: Անկլիքան եկեղեցին բաւական տարի է որ միսիոնարութիւն մը դրկած է Նեստորականներուն մէջ, որոնք կըրցած էին համոզել Գէնդրպրիի հանգուցեալ արքեպիսկոպոսը, ազնիւ ու միամիտ հոգի, թէ Անկլիքան ու Ասորի եկեղեցին քոյր եկեղեցիներ էին, — քոյրէ աւելի բան մը, մի մարմին եւ մի բնութիւն, նոյն դաւանանքով ու նոյն վարդապետութեամբ: Գէնդրպրիի արքեպիսկոպոսը եռանդեամբ փարեցաւ այս գործին, ու ջանք շինայեց Անկլիքան եկեղեցիին այդ հեռաւոր ու ազբաւ քոյր տառապանքները — հոգեկան, այլ մանաւանդ նիւթական — առատաձեռնօրէն մեղմելու:

Այս երեք միսիոնարութիւնները տարիներէ ի վեր գեշ աղէկ կ'ելլէին կ'իյնային կար Ուրմիոյ եւ Սալմաստի Նեստորականներուն մէջ, մէկ հնձելով ու հազար փառք տալով, երբեմն երբեմն իրարմէ խելով հոգիներ որոնք կուգային հասնալու թէ գրացիին Աստուածը իրենցինէն աղէկ էր, ու, հազիւ համոզուած, կ'ելլէին դիմացի դուռը ափ առնելու՝ նոյն հետաքրքրութենէն վառեալ:

Բայց, երկնային բաներու սիրովը տողորուած այս ժողովրդին համար կ'երեւայ թէ վճռական ճշմարտութիւններ չկան: Որովհետեւ ահա մէկ երկու տարի է որ իրենց մէջ հեռագհետէ աւելի ընդարձակ շարժում մը կայ հաւատալու թէ իրենց հոգիին պէտքերուն ամէնէն աւելի սերտիւ համապատասխանող Աստուածը՝ ո՛չ Երիցականներուն Աստուածն է, ո՛չ Լազարիսցիներունը, ո՛չ ալ Գէնդրպրիի արքեպիսկոպոսինը, հապա... Հիսիսի Աստուածը:

Ռուսական օրթոտոքս՝ միսիոնարութիւն մը եկած ահա երկու տարիէ ի վեր հաստատուած է այդ կողմերը: Մեծաւորն է ռուս վարդապետ մը, որուն կ'աջակցին երկու երեք նեստորական եպիսկոպոս ու վարդապետ որոնք Օրթոտոքս եկեղեցիին դաւանութիւնները ընդգրկած են, եւ մէկ քանի ռուս երիտասարդ արեղայ:

Ռուսական միսիոնարութիւնը առատ հունձք մը հընձելու վրայ է. հազարաւոր Նեստորականներ իր փարախը կ'արտորան, եւ, մինչեւ ցնոր անօրինութիւն, իրենց հոգեկան յագեցումը գտած ըլլալ կը թուին:

Շատ խիստ չըլլանք մեր գատաստանին մէջ մեր այս գրացիներուն նկատմամբ: Յանցանքը իրենցը չէ եթէ Եւրոպա ու Ամերիկա ազնիւ մարդիկ կը գտնուին որոնք կ'ուզեն անպատճառ իրենց Աստուածը պաշտել տալ ամէնուն, ու ասոր համար ոչ մէկ ծախքի առջեւ կ'ընկրկին: Գալով այն նեստորականներուն որոնք հայրենիքէն գուրս կը գործեն, գերազանց մարդիկ են անոնք որոնք չնչին գնով մը քիչ մը երազ կը ծախեն գերբնականի ծարաւի ամբողջներու: Կը բաւէ որ ռուս մուժիքը կամ անտալուզ գեղջուկը հաշտայ թէ իր համբուրած երկաթի ժանդոս

կտորը իրանցնէ աստուածային արիւնով մը ոտագրած է: Ու յետոյ, Նեստորականներն են միակ «Խաչողոյնները» սրնք խանդավառութիւնները ու հատաբները ու հոգիին սլացքները, յոյսերը, երազները ու իտալները կը բերեն կը թանձրացնեն իրենց քսակին մէջ:

Լ. ՉԱՐԹՈՒՄԵԱՆ

ԼՈՒՐԵՐ

**ԹԻՒՐԹԻԱ ԵՒ ԻՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ.** Սոչրանիւն բարեկամները շահելու համար Թրանսա և Անգլիա իրարու հետ կը մրցակցին: Այս առիշտ է. Պոլսէն Լոնտոնի շատ կարեւոր բերքի մը հետեւեալ հետաքրքրական տեղեկութիւնները կը հաղորդուին:

«Ամեն պատեհութեան օգտուելով սոչրանէն ոչեկն զրոշիւն խնդրելու համար Պ. Բոնուրանի փոքրագունտրիւնը հոս մեկնութեան տեղի կոչուայ, եւ հաշտութեան չի ծառայեր բարձրացնելու Թրանսայի շոքր որ արդէն քիչ շատ նսեմացած է, այժմ Թրանսա պատահած դեպքերուն պատճառաւ: Թիւրքերը ընդհանրապէս, եւ սոչրանը յատկապէս շատ սրտեւտութեամբ կը դատեն տեսակ տեսակ բարեկամական ցոյցերու արժեքը: Անոնց յարգանքը եւ բարեկամութիւնը գրաւելու են ապահով ձամբան շատ ետեւուն վագելու մէջ չի կայանար:

Թրանքեւոտոս դաշնակցութիւնը, որուն քաղաքական շոքր կարեւորութիւնը մը չունենալը ոչիշ տեղ հաստատուած է, հոս ալ իր վարկը կորսնցուցած է՝ Էրկու պետութեանց է. Պոլսոյ դեսպաններուն իրարու հետ ունեցած հակառակութեամբ, որ շատ ծածուկ չի պահուիր: Պ. Բոնուրան զանազան առիթներու մէջ ուղղակի հակառակեցաւ Ռուսիոյ գործողութեանը: Այս միջոցիս անգլիական ազդեցութիւնը — երբ կարելի է այսպէս անուանել զանազան դեսպանատուններէն մէջ մը մեկուն, մէջ մը մեկային ընծայուած դիւրութիւնները — որոշապէս գորակարգու զրայ է, եւ նախկին մտերմութեան նմանող բան մը կը սկսի — բայց դեռ միայն կը սկսի — ծնունդ առնել նորէն:»

**ՊԱՂՏԱՏԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ.** Սոչրանը հակամտ կ'երեւի Պաղտատի գծին մեկնաշնորհը Գերմանացիներուն տայ: Սակայն կ'ընտրի նաեւ թէ որքան որ ալ արտօնութիւնը գերման ընկերութիւնը ստանայ, բայց եւ այնպէս այդ ընկերութիւնը պիտի համաձայնի անգլիական եւ ֆրանսական ընկերութեանց հետ, ամբողջ գործին 0 Օիւն 48ը գերմանական ընկերութիւնը: 32 անգլիականը և 20ը ֆրանսականը շինելու պայմանագրութեամբ: Ինչ որ ալ ըլլայ սակայն, հաշտական չի որ առաջիկայ գարունէն առաջ վերջնական ո՛ր է գործի ձեւնարկուի: Յատուի յանձնաժողով մը ընկերութիւններ պիտի կառարե տեղի վրայ, եւ այդ մարմինը հագիւ թէ յառաջիկայ ապրիլին կտրեմայ իր աշխատութիւնները աշարտել:

**ՊԱՏՐԻԱՐԿԱՆ ՏԱԳՆԱՊ.** Կ. Պոլսէն սեպտեմբեր 14 բռնակառով «Թայմզ»-ին կը հեռագրուի թէ սոչրանը Հայոց պատրիարքին հրաժարականը իսպառ մերժելով, յանձնաժողով մը կազմելու է կացութիւնը ընկերու համար: Յանձնաժողովին անդամներն են՝ Տատեան Արքիե փաշա ու երկու բարձրաստիճան թիւրք պաշտօնեայ: Սակայն Օրմանեան պատրիարքը աւ այժմ այդ եւս պաշտօնատեղիէն չ'երթար և իր բնակարանը կ'աշխատի:

**ՍՈՒԼԹԱՆԻՆ ԴԷՄ.** Սեպտեմբերի առջի օրերը իզմիրի ոստիկանութիւնը Կ. Պոլսէն ստացած հրամանի մը վրայ քանի մը նշանաւոր թիւրքեր ձերբակալեց: Վերջին անգամ տեղեկութեանց համեմատ բանտարկուողներուն մէջ են երեւելի թիւրք փաստաբան մը, ու Միլիկի երկու տեղիւի: Ամենքն ալ սոչրանի զեմ դաշարութիւն մը պատրաստելու ամբաստանութեան ներքեւ են: Միւլեւոյն ատեն Երլորդի պաշտօնը սոչրանը պահպանող անաշխատներէն վեցը Ափրիկի խորերը աքտորուցան:

**ՉԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ.** Կ. Պոլսէն «Թայմզ»-ին կը հեռագրեն թէ այս օրերս ըստ սովորականին բազմաթիւ Հայեր ձերբակալուելով հանդերձ, «Իշիմա»-ներ ալ ձերբակալուել են. պատճառը յայտնի չէ. Երլորդի պաշտօնը խոտելայ վիճակի մէջ է:

**ԵԼՄԷՆԻ ԱՊՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ.** Ատենէն կը հարուրեն թէ Եմենի ապստամբութիւնը մեծ կարեւորութիւն ստանալու վրայ է, վասն զի դրսէն ազակցութիւն կը գտնի: Սոչրայի, Հնդկաստանէ, Եգիպտոսէն եւ ուրիշ կողմերէ անեղած շոքրեր կը հաստատեն թէ Եմենի յեղափոխական շարժումին համար իսլամներուն համակրանքը օր օր կը շատնայ ու լոկ քաջազրական խօսքերու սահմանէն ալ անդին կ'անցնի: Սակայն կ'երեւի թէ Երլորդին տակաւին կարող չեն եղած այս իրողութեան անրոյզ ծանրակշռութիւնը ընթացել:

ՀԱՍՑԵ ՈՒ ԲԱԺՆԵԿԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆԻՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեկիւն զրկել առ

L. FRANK,  
32, CHESTERTON ROAD,  
(ENGLAND) LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆԻՔԸ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին և 1 Յին: Բաժնեկիւն է Եւրոպայի համար օտարեկան 10 և վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար օտարեկան 2 և վեցամսեայ 1 օտլար: